

24729

ԲՍՆՎՈՐԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

15 JAN 2010

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՊՐՈՑԵՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏԱԳԱ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
Մ Ա Ս Ի Ն

ԸՆԿ. ՇՎԵՐՆԻԿԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ՀԱՄԿԻ ԿՄ ՊԼԵՆՈՒՍՈՒՄ ՅԵՎ
ԱՅՐ ԱՌՔԻՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԲԱՆԱԶԵԿԸ

Հ Ա Ս Ի Ն

331.88(47)

Շ-90


LA 355

1. 28 (47)

2-90

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏԱԳԱ ԲԱՐԵԱՎՄԱՆ
Օ Ա Ս Ի Ն



(ԸճԿ. Շվեդիայի գեկուցուժը ՀԱՄԿԵ-ի V պլենումում յեվ
այդ առթիվ ընդունված բանաձեւը)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Յ Ե Ր Ե Վ Ա Ն — 1981

նքի
ոճ-
ն
կա-
/ սո-
պա-
տա-
րը և
բան-
սա-
շուն
իու-
ման
ենք
ուն-
զմի
զով
վե-
րին
ըը

15 .07. 2013

24429



59047-66

ԳՆՏՆՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Հրատ. № 1649 Գրատ. 8355 (ը) Գատ. 1848 Տիրամ 7000

ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏԱԳԱ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՆԳԱՄՅԱԿԻ ՏԵՄԹԵՐԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՊՐՈՖ-
ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Վերակառուցման շրջանը, վորը կապված է կապիտալիստական տարրերի վրա ամբողջ Ֆրոնտով սոցիալիստական հարձակում ծավալելու խնդրին, պահանջում էր արմատապես վերակազմել պրոլետարիատի բոլոր մասսայական կազմակերպությունները և մանավանդ պրոֆմիությունները, վորպես վողջ բանվոր դասակարգին միավորող ամենից ավելի մասսայական կազմակերպություններ:

16-րդ կուսամասդումարը-բայլեիկյան ծավալուն զբոհի այդ համադումարը-սահմանեց պրոֆմիությունների հիմնական խնդիրները վերակառուցման շրջանում: Յեթե համառոտակի ձևակերպելու լինենք այդ խնդիրները, ապա հիմնականում կստանանք հետևյալը, —պայքարել ուպորտունիզմի և տրեդյունիոնիզմի դեմ՝ «յերեսներս դեպի արտադրություն» լոզունգով վերակազմելու համար պրոֆմիությունները, մոբիլիզացիայի յենթարկել բանվորական լայն մասսաներին արգելախտական շինարարության խնդիրների շուրջը:

դիտարկել ու ծավալել սոցիալիստական ու հարվածային-
թյունը, ուժեղացնել պրոֆմիլուիթյուններին աշխատան-
քը բանվոր դասակարգին նյութական-կենցաղային դե-
բուլթյան ամենորոյա բարեկամման և կուլտուրական
մակարդակի բարձրացման ասպարիզում:

Կուսակցութեան 16-րդ համագումարից հետո ան-
ցել է ավելի քան վեց ամիս: Այս ժամանակամիջոցում
պրոֆմիլուիթյունները մի շարք հաջողութուններ ձեռք
բերին 16-րդ կուսհամագումարի առաջադրած խնդիրնե-
րի կատարման գործում: Մենք կարողացանք պրոֆ-
միլուիթյունների ապարատից վտարել բացահայտ ոպոր-
տունխտական, տրեդյունիոնխտական տարրերին և
նրանց փոխարեն ներդրավել բանվորներին. բեկում ա-
ռաջացավ պրոֆմիլուիթյունների արտադրական խըն-
դիրների վերաբերյալ հայացքների մեջ, և մենք ավե-
լի մտտեցանք արտադրական հարցերի լուծմանը, դուրս
յեկանք «Յերեսներս դեպի արտադրութիւն» լողունդի
կոնկրետ իրագործման ճանապարհը: Պրոֆմիլուիթյուն-
ները զգալի աշխատանք կատարեցին սոցմըցման ու
հարվածայինութեան ծավալման ուղղութեամբ, գործա-
րաններում և Ֆարբիկաներում լայն տարածելով սոց-
մըցման նոր ձևերը—փոխադարձ ոգնութեան հարվա-
ծային բրիգադները, ռացիոնալիզատորական հաշիվը,
հանդիպական արդ-ֆինպլանը և աշխատանքի սոցիալիս-
տական կազմակերպման այլ ձևվերը, վորոնք ապահո-
վում են բանվորական լայն մասսաների ներդրավումը
արտադրութեան անմիջական կառավարման մեջ:

Բայց այս բոլոր անվիճելի նվաճումները ղեռնա-
ածենեին ել բավական չեն լիովին ապահովելու 16-րդ
կուսհամագումարի վորոշումների կատարումը՝ ամ-

բողջ Ֆրոնտով սոցիալիստական հարձակումը շարու-
նակելու այստրվա պայմաններում: Պայքար հնդամյակը
չորս տարում իրագործելու համար և բանվորական մաս-
սաների հարաճուն ակտիվութեանը, գործադրութեան
վերացումը մեր յերկրում, հնդամյակի յերրորդ, վնւա-
կան տարվա կատարումը և հենց միայն 1931 տարում
2 միլիոն բանվորական նոր կադրերի, վորից 800,000
կանանց ներդրավումը ժողովրդական տնտեսութեան
մեջ,—այս ամենը պրոֆմիլուիթյուններին՝ վորպես պրո-
լետարիատի մասսայական կազմակերպութեաններին՝
հետագա վերակազմութեան հարցն են դնում: Այս պայ-
մանները պահանջում են, վոր պրոֆմիլուիթյուններն ա-
վելի կոնկրետ մասնակցութեան բերեն սոցիալիստա-
կան արդյունաբերութեան ղեկավարութեան գործին,
կազմակերպեն բանվորական մասսաների հարաճուն
ակտիվութեանը արտադրութեան կոնկրետ հարցերի
չուրջը, ավելի ուշի ուշով հաշի առեն բանվորական
առանձին խմբերի արտադրական ու կենցաղային ա-
ռանձնահատկութեանները: Այս ամենը միաժամանակ
պահանջում է, վոր պրոֆմիլուիթյուններն ուժեղացնեն
իրենց աշխատանքը բանվորական լայն մասսաների նյու-
թական և կուլտուր-կենցաղային ապասարկման ուղ-
ղութեամբ:

Մեր յերկրի արագ ինդուստրացման՝ տեմպը, ժո-
ղովրդական տնտեսութեան ընդհանուր աճումը, գործող
ձեռնարկութեաններին ընդարձակումը, ինչպես նաև
արտադրութեան նոր ճյուղերի առաջացումը, ինչպիսին
են, որինակ, տրակտորի, ավտոմոբիլի, գյուղատնտե-
սական մեքենաների՝ արտադրութեանը և երկկտրոար-
դյունաբերութեանը յետոյր քանակութեամբ բանվորնե-

բով և Թ. Միութեան մեջ առաջին անգամ կիրառվող աշխատանքի ու արտադրութեան առանձնահատուկ պայմաններով, — այդ ամենը պահանջում են փոխել պրոֆմիությունների աշխատանքի և կառուցվածքի մեթոդներն ու ձևերը: Վերջենք, որինակի համար, Ռոստովի գյուղատնտեսական մեքենաների գործարանը: Սա արտադրութեան նոր ճյուղ է, վորտեղ առաջին անգամը լինելով կիրառվում են կոնվեյերի սխեմա, վորը բոլորովին այլ կերպ է դնում արտադրութեան կազմակերպման, տեխնիկայի յուրացման և աշխատանքի վճարման սխեմայի հարցերը:

Պրոֆմիությունները ամենակարճ ժամանակամիջոցում այնպես պետք է կազմակերպեն բանվոր դասակարգին, վոր նա կարողանա յուրացնել արտադրութեան բոլոր պրոցեսները և ապահովեն նոր ձեռնարկությունների նորմալ աշխատանքը:

Այս խնդիրների իրագործումը կապահովի վերակառուցման շրջանում պրոֆմիությունների առաջ դրված պրոբլեմների լուծման արագ առաջընթացը:

ԿՈՆԿՐԵՏԱՑՆԵԼ ՄԻՂԻՔՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒՑ Ք ՈՒՆԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՍ

Պրոֆմիությունների առաջ, ինչպես ասացի, խընդիր է դրված կոնկրետ մասնակցություն բերել վիթխարի չափերով աճող սոցիալիստական արդյունաբերութեան բազմատեսակ ճյուղերի ղեկավարման գործին: Մենք պետք է կազմակերպենք բանվորական մասսաների ակտիվությունը արդյունաբերութեան կոնկրետ խնդիրների շուրջը. միայն այդ պայմանով մենք կկարողանանք ապահովել սոցիալիստական ու հարվածաթու-

թեան հետապաս ծաղաղումը և նրանց բարձրագույնումը նոր աստիճանների վրա:

Իսկ ինչ չափով է նպաստում պրոֆմիությունների ներկա կառուցվածքը թվածս խնդիրների կատարմանը:

Բավական է մի քանի տվյալներ բերել մեր միությունների թվական քանակութեան մասին՝ այն համեմատելով արդյունաբերութեան ծավալման և դրա հետևանքով արտադրութեան մեջ նոր բանվորների ներգրավման հետ, վորպեսզի տեսնենք, թե ինչքան դժվար է պրոֆմիութենական խոշոր կազմակերպությունների համար կարգավորելու իրենց առաջ դրված խնդիրները: Որինակի համար, մետաղագործները միավորում են 1.2 միլիոն միութեան անդամ, կառուցողները՝ 1.3 միլիոն անդամ, գյուղատնտեսական բանվորները՝ 1.5 միլիոն անդամ:

Այսպիսի դրություն է նաև բազմաթիվ այլ միություններում:

Տնտեսական մարմինները դեռևս 11/2-2 ասըի առաջ ստորաբաժանվեցին, վերակազմվեցին, վորպեսզի ավելի լավ ղեկավարեն արդյունաբերութեան առանձին ճյուղերը: Յեվ ի՞նչ ստացվեց: Ստացվեց այն, վոր միլիոնից ավելի անդամ ունեցող միությունները այսօր ստիպված են գործ ունենալ արտադրութեան տարբեր ճյուղերը ղեկավարող տնտեսական բազմաթիվ միավորությունների հետ: Մետաղագործներն, որինակ, գործ ունեն 28 միավորութեան հետ, անունդ-համը՝ ավելի քան 30, քիմիական միությունը՝ 30 և այլն: Այսպիսի պայմաններում պրոֆմիությունները կարող են արդյոք ընդհուպ մոտենալ և կոնկրետ մասնակցություն բերել տնտեսական միավորությունների ամե-

բով և Թ. Միության մեջ առաջին անգամ կիրառվող աշխատանքի ու արտադրութայն առանձնահատուկ պայմաններով, — այդ ամենը պահանջում են փոխել պրոֆմիությունների աշխատանքի և կառուցվածքի մեթոդներն ու ձևերը: Վերցնենք, որինակի համար, Ռոստովի դյուղատնտեսական մեքենաների գործարանը: Սա արտադրութայն նոր ճյուղ է, վորտեղ առաջին անգամը լինելով կիրառվում են կոնվեյերի սխեման, վորը բոլորովին այլ կերպ է դնում արտադրութայն կազմակերպման, տեխնիկայի յուրացման և աշխատանքի վճարման սխեմանի հարցերը:

Պրոֆմիությունները ամենակարճ ժամանակամիջոցում այնպես պետք է կազմակերպեն բանվոր դասակարգին, վոր նա կարողանա յուրացնել արտադրութայն բոլոր պրոցեսները և ապահովեն նոր ձևերակառուցվածքի նորմալ աշխատանքը:

Այս խնդիրների իրագործումը կապահովի վերակառուցման շրջանում պրոֆմիությունների առաջ դրված պրոբլեմների լուծման արագ առաջընթացը:

ԿՈՆԿՐԵՏԱՑՆԵԼ ՄԻՊԻՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒ- Թ ՈՒՆԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Պրոֆմիությունների առաջ, ինչպես ասացի, խոնդիր է դրված կոնկրետ մասնակցություն բերել վիթխարի չափերով աճող սոցիալիստական արդյունաբերութայն բազմատեսակ ճյուղերի ղեկավարման գործին: Մենք պետք է կազմակերպենք բանվորական մասսաների ակտիվությունը արդյունաբերութայն կոնկրետ խնդիրների շուրջը. միայն այդ պայմանով մենք կկարողանանք ապահովել սոցիալական ու հարվածաթու-

թյան հետադարձ օգտակարությունը և նրանց բարձրագույնը նոր աստիճանների վրա:

Իսկ ինչ չափով է նպաստում պրոֆմիությունների ներկա կառուցվածքը թվածս խնդիրների կատարմանը:

Բավական է մի քանի տվյալներ բերել մեր միությունների թվական քանակութայն մասին՝ այն համեմատելով արդյունաբերութայն ծավալման և դրա հետևանքով արտադրութայն մեջ նոր բանվորների ներգրավման հետ, վորպեսզի տեսնենք, թե ինչքան դժվար է պրոֆմիութենական խոշոր կազմակերպությունների համար կարգավորելու իրենց առաջ դրված խնդիրները: Որինակի համար, մետաղագործները միավորում են 1.2 միլիոն միություն անդամ, կառուցողները՝ 1.3 միլիոն անդամ, դյուղատնտեսական բանվորները՝ 1.5 միլիոն անդամ:

Այսպիսի դրություն է նաև բազմաթիվ այլ միություններում:

Տնտեսական մարմինները դեռևս 11/2-2 ասարի առաջ ստորաբաժանվեցին, վերակազմվեցին, վորպեսզի ավելի լավ ղեկավարեն արդյունաբերութայն առանձին ճյուղերը: Յեվ ի՞նչ ստացվեց: Ստացվեց այն, վոր միլիոնից ավելի անդամ ունեցող միությունները այսօր ստիպված են գործ ունենալ արտադրութայն տարբեր ճյուղերը ղեկավարող տնտեսական բազմաթիվ միավորությունների հետ: Մետաղագործներն, որինակ, գործ ունեն 28 միավորութայն հետ, անունդ-համը՝ ավելի քան 30, քիմիական միությունը՝ 30 և այլն: Այսպիսի պայմաններում պրոֆմիությունները կարող են արդյոք ընդհուպ մոտենալ և կոնկրետ մասնակցություն բերել տնտեսական միավորություններին ամե-

նոր յա աշխատանքին և արդյունաբերութեան առանձին
ճյուղերի արտադրական հարցերի լուծմանը :

Վերջնենք թեկուզ մետաղագործների միությունը :
28^ր վոր գոնե մեկական անգամ յուրաքանչյուր տընտ-
միավորութեան ղեկուցումը կոնտրոլ թվերի մասին լսե-
լու համար կենտրոնական կոմիտեն պետք է հատկացնի
28 նիստ, այսինքն տարեկան 20 տասնորյակ : Այս դրու-
թյամբ կարո՞ղ է արդյոք մետաղագործների կենտկոմը
նորմալ մասնակցութեամբ ունենալ յուրաքանչյուր
տնտմիավորութեան տնտեսական խնդիրների լուծմանը :
Բնական է վոր վոչ : Մետաղագործների միութեան կենտ
կոմը այս պայմաններում կամ բոլորովին պիտի հրա-
ժարվի մասնակցելու տնտմիավորութեանների աշ-
խատանքին, կամ իր ամբողջ ուշադրութեանը պիտի
կենտրոնացնի ամենից ավելի կարեւոր, ամենից ավելի
խոշոր տնտեսական կազմակերպութեանների վրա :
Պարզ է, վոր արտադրութեան բազմաթիվ ճյուղերի
բանվորութեանը միավորող նման պրոֆմիութենական
կազմակերպութեանները չեն կարող ուղտագործել ու
բնդհանրացնել ձեռնարկութեաններում յեղած ամբողջ
փորձը և նրա միջոցով ազդել տնտեսական միավորու-
թյունների աշխատանքի վրա :

Ել չեմ խոսի այն մասին, վոր այդպիսի խոշոր
միութեանների համար չափազանց բարդանում է այս
կամ այն տնտեսական միավորութեան մեջ մտնող արդ-
յունաբերական յուրաքանչյուր ճյուղի բանվորների ա-
ռանձնահատկութեանների սպասարկման աշխատանքը :
Իսկ չե՞ վոր այդ աշխատանքն ըստ եյութեյան կարեւոր-
բազույն պայմանն է արդյունաբերութեան առանձին
ճյուղերի ըստ ամենայնի լիակատար ծափալման հո-
մար :

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՔՐԱՑՈՒՄԸ ՆՐԱՆՑ ԿՄՈՏԵՑՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆԸ, ԿԲՄԵԼԱՎԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

Այս ամենը դժվարին պայմաններ է ստեղծում ղե-
կավարութեան գործում թե՛ պրոֆմիութեանների գը-
ծով և թե՛ տնտեսական հարցերի լուծմանը մասնակցե-
լու համար : Ահա թե ինչո՞ւ, ընկերնե՛ր, այսօր, յերբ
միութեանների առաջ հսկայական խնդիրներ են դրված
սոցիալիստական արդյունաբերութեան ընդարձակման,
արդֆինպլանների, հատկապես յերրորդ, վճարական
տարվա պլանների կատարման և գերակատարման հա-
մար մղվող պայքարի ծավալման ուղղութեամբ, մեր
կուսակցութեան կենտրոնական կոմիտեն, վոր իրագոր-
ծում է սոցիալիստական շինարարութեան բոլոր բնա-
զավանների բայլչեիկյան ամուր ղեկավարութեանը,
ճիշտ ժամանակին մի շարք միջոցներ է առաջադրում
պրոֆմիութեանների աշխատանքի հետագա բարելայ-
ման, վորի հետ նաև նրանց փոքրացման համար :

Կուսակցութեան կենտրոնական կոմիտեյի այս վո-
րոշումների իրագործման համար ՀԱՄԿԽ-ի նախագա-
հութեանը մշակել է մի ամբողջ շարք գործնական ձեռ-
նարկումներ, վորպիսին առանց կատարելու մենք չենք
կարողանա լուծել «Յերեսներս դեպի արդյունաբերու-
թյուն» լողունդի լիակատար ու բազմակողմանի իրա-
կանացման խնդիրները :

Ի՞նչպես ենք մենք նախատեսել կատարելու միու-
թյունների փոքրացումը :

ՀԱՄԿԽ-ի նախագահութեանը նշել է մի ամբողջ
շարք միութեանների փոքրացումը հիմք ունենալով

պրոֆմիուսթյուններն կառուցվածքի տրամադրական ըսկզմունքի հետադա խորացումը (մեկ ձեռնարկություն-մեկ միություն)։ միություններն ստորաբաժանվելով դառնալու յեն առանձին ինքնուրույն միություններ, վորոնք կկարողանան ավելի լավ կապվել տնտեսական միավորությունների հետ և սպասարկել արդյունաբերության առանձին ճյուղերում զբաղված բանվորական հիմնական ու առաջնորդող խմբերի ուրույն առանձնահատկությունները։

Մենք նախատեսել ենք մետաղագործների միությունը բաժանել հետևյալ 7 միությունների․

1. Մետալուրգիական արդյունաբերության բանվորների միության, վորը միավորելու յե 283·600 հոգի։

2. Տրանսպորտային մեքենաչինության բանվորների միություն-161·000 հ․․

3. Գյուղատնտեսական մեքենաչինության միության-108·000 հ․

4. Ելեքտրո-տեխնիկական արդյունաբերության և էլեկտրոկայանների բանվորների միություն-130·000 հոգի․

5. Ավտոտրակտորային և ավիացիոն արդյունաբերության բանվորների միություն-46·700 հ․

6. Գունավոր մետաղների արդյունահանման և արդյունագործության բանվորների միություն-92·000 հ․․

7. Մեքենաչինական արդյունաբերության միություն-763·000 հ․․

Այս միություններից յուրաքանչյուրը ներկայացնելու յե արդյունաբերության միատեսակ ճյուղի բանվորության խոշոր միավորություն, յուրաքանչյուրը

100-000-ից ավելի անդամով։ Գանահության անսահման տից բացառություն և կազմելու ավտո-տրակտորային և ավիացիոն արդյունաբերության բանվորների միությունը, վորն ունենալու յե միայն 46·000 անդամ։ Իսյց նույնիսկ այս միությունը, վորը միավորում և արդյունաբերության բոլորովին նոր մի ճյուղի բանվորների, մի յերկու տարուց ավելի մեծ քանակությամբ բանվորություն կընդգրկի, վորովհետև այս արդյունաբերության զարգացման հեռանկարները շատ խոշոր են։ Ստալինգրադի տրակտորային գործարանի գործունեությունից ծավալումը, Ուրկովի և Չելյաբինսկի գործարանների, Նիժնի-Նովգորոդի ավտոմոբիլի գործարանի ընդարձակումը, վորոնցից յուրաքանչյուրում աշխատելու յե ավելի քան 10·000 մարդ, այդ ամենը մտազա տարիներում միությունը կդարձնեն ավտո-տրակտորային և ավիացիոն արդյունաբերության այդ կարեվորագույն ճյուղի բանվորության ուժեղ մի միավորություն։ Այս միությունը կմիավորի այնպիսի մի արդյունաբերության բանվորների, վորտեղ կիրառվելու յեն արտադրության ու աշխատանքի կազմակերպման բոլորովին նոր մեթոդներ։ Այս միությունը մոտիկից պետք և ուսումնասիրի նոր տեխնիկան, աշխատանքի կազմակերպման նոր ձևերը, վորպեսզի կոնկրետ մասնակցություն ունենա արտադրական խընդիրների լուծմանը, ավելի լավ ու ավելի մոտիկից սպասարկի բանվորական բոլորովին նոր խմբերին։

Լեռնագործների միությունը մենք մտադիր ենք բաժանել 4 միությունների-լեռնահանքային արդյունաբերության բանվորների միություն, վորն ունենալու յե 114·000 անդամ, ածխարդյունաբերության բանվոր-

ների միություն-380.000 անգամ, նախարարյունաբե-
րութեան բանվորների միություն-75.000 անգամ, թեր-
թաքարի և տորֆի արդյունաբերութեան բանվորների
միություն: Ինչպես տեսնում եք, այստեղ ել կազմվում
են այնպիսի միություններ, վորոնք միավորում են
արտադրութեան բոլորովին ախարաված տեսակների
բանվորութեան: Իսկ քանակական տեսակետից սրանք
լինելու յեն ուժեղ ու համասեռ միութենական կազմա-
կերպություններ:

Լեռնադործների ներկայումս դոյություն ունեցող
միությունը, վորը միավորում է արդյունաբերական
այս բոլոր ճյուղերի բանվորներին, հնարավորություն
չի ունեցել շերտավորված դեկավարություն ցույց տալ
ու մոտենալ սույն բոլորովին տարբեր բանվորական
խմբերի սպասարկմանը և կոնկրետ մասնակցություն
ունենալ արտադրական խնդիրների լուծմանը: Հիմա
մենք այնպիսի մի դրության մեջ ենք դտնվում, յերբ
արդյունաբերութեան ծավալումը և բոլոր ճյուղերի
բանվորների լավագույն սպասարկման խնդիրը հրա-
մայական պահանջ են առաջադրում լեռնադործների
միությունը բաժանել առանձին խնդուրույն միու-
թյունների:

Քիմիական միությունը մենք բաժանում ենք 3-ի-
հիմնական քիմիական արդյունաբերութեան բանվորնե-
րի միություն-180.000 հ., քիմիական արդյունաբերու-
թեան բանվորների միություն՝ 47.500 հ., ալալու-
հենապակու արդյունաբերութեան բանվորների միու-
թյուն՝ 111.000 հ.:

Մանածադործների միությունը մենք բաժանում
ենք յերեքի: Բամբակադործական արդյունաբերութեան

բանվորների միություն՝ 465.000 հ., բարձրագույն լեռնա-
կան և մետաքսադործական արդյունաբերութեան բանվոր-
ների միություն՝ 160.000 հ., վուշի և շուտի արդյու-
նաբերութեան բանվորների միություն՝ 135.000 հ.:

Կառուցողների միությունը բաժանվելու յե յերեքի՝
արդյունաբերական և կոմունալ-բնակարանային շինա-
բարութեան բանվորների միություն, վորն ունենալու
յե 1.200.000 բանվոր, յերկաթուղային ու նավահան-
գըստային շինարարութեան և տեղական ճանապարհա-
յին տրանսպորտի բանվորների միություն-400 հազար
հոգի, ցեմենտ-քերամիկական արդյունաբերութեան
բանվորների միություն-150.000 հ.:

Սննդադործների միությունը մենք բաժանում ենք
4-ի, -հատիկաղացի-հացի արդյունաբերութեան բան-
վորների միություն-159.000 հ., յուղադործական, մսի
ու ձկան և կոնսերվի արդյունաբերութեան բան-
վորների միություն-107.000 հ., գյուղարհեստադոր-
ծական բանվորների միություն-88.000 հ., հասարա-
կական սննդի աշխատողների միություն՝ 200.000 հ.:

Գյուղատնտեսական բանվորների միությունը բա-
ժանվում է 4-ի, -չաքարի արդյունաբերութեան բան-
վորների միություն (այստեղ մտնելու յեն նաև Ծա-
քարտեստի խորհտնտեսությունները), հողադործական
խորհտնտեսությունների բանվորների միություն, ա-
նասնապահական խորհտնտեսությունների բանվորների
միություն և մեքենա-տրակտորային կայանների բան-
վորութեան ու բատրակների միություն: Յես արդեն ա-
սացի, վոր գյուղատնտեսական բանվորների միությունը
ունի 1.5 միլիոն անգամ, բայց աշխատողների թիվը
զգալիորեն ավելի յե: Ուստի գյուղատնտեսական բան-

վարձերի միութեանը և միութեան բաժանելը հետա-
վորութեան կտա ավելի կոնկրետ կերպով մոտենալ այն
պարբերմաների լուծմանը, վորոնք գոյութեան ունեն ա-
նասնապահական ու հողադործական խորհանտեսու-
թյունների, շաքարի արդյունաբերութեան և մեքենա-
տրակատրային կայանների ծավալման բնագավառում:

Գյուղատնտեսութեան այս բոլոր ճյուղերը զար-
գացման չափազանց խոշոր հեռանկարներ ունեն:

Խորաբաժառի միութեանը մենք բաժանում ենք յե-
րեքի, -կոոպերացիայի և պետառևտրի աշխատավորների
միութեան, պետական հիմնարկութեանների աշխա-
տավորների միութեան և ֆինանսա-բանկային աշխա-
տավորների միութեան:

Կոմունալիզմների միութեանը բաժանվում է յե-
րեքի, -կոմունալ տնտեսութեան բանվորների միու-
թյուն (այստեղ մտնելու յեն տրամվայի և ավտոբուսի,
գազային գործարանների և ջրմուղային աշխատավոր-
ները), քաղաքային ձեռնարկութեանների բանվորների
միութեան, վորտեղ մտնելու յեն բաղնիքների, վարսա-
վիրանոցների, լվացքատների և մանր ձեռնարկութեան-
ների աշխատավորները, և յերրորդ՝ տնային աշխատա-
վորների միութեան:

Այսպիսով, գոյութեան ունեցող այն միութեանների
հետ միասին, վորոնց մասին յես այստեղ չհիշատակե-
րի և վորոնք չեն ստորաբաժանվելու, լինելու յե ընդա-
մենը 45 միութեան: Այս 45 միութեանները այնպես
պետք է կառուցեն իրենց աշխատանքը, վոր կարողա-
նան լուծել արդյունաբերութեան համապատասխան
ճյուղերի առաջ դրված արտադրական խնդիրները, ըս-

պասաբեկի բանվորների ուրույն առանձնահատկու-
թյունները և դրանով ապահովեն «Յերեսներս դեպի
արտադրութեան» լողունդի գործնական իրականացումը:

ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՆԵՐԸ ՄՈՏԵՑՆՈՒՄ ԵՆ ԱՐ- ՏԱԳՐՈՒԹՅԱՆԸ, ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

Բայց վերահաղմութեանը սոսկ միութեանների
ստորաբաժանումներով սահմանափակելը բավական չէ:
Վերահաղմութեան գործում պետք է ավելի առաջ դնալ:
Հարկավոր կլինի, վոր մենք միութեաններում կազմա-
կերպենք արտադրական սեկցիաներ ըստ արդյունաբե-
րութեան կարեվորագույն ճյուղերի, վորպեսզի կարո-
ղանանք բանվորներին ել ավելի մեծ չափերով մասնա-
կից դարձնել արտադրական խնդիրների լուծմանը, և
ապահովել արդյունաբերութեան առաջնորդող ճյուղի-
րի բանվորութեան լավագույն սպասարկումը:

Վերցնենք մեքենադործական բանվորների միու-
թյունը: Ինչո՞ւ համար այնտեղ չստեղծենք գաղղյա-
հադործական, կաթսայադործական, ինսարումենտալ
և այլ արտադրական սեկցիաներ:

Այդպիսի սեկցիաներ ստեղծելը վոչ միայն չի հա-
կասի միութեանների կառուցման արտադրական ըս-
կզբունքին, այլ ավելի կյուրացնի այն: Մի քանի ըն-
կերներ ինձ հետ մասնավոր խոսակցութեան ունենալիս
կասկած եյին հայտնում, թե արդյոք արտադրական
սեկցիաներ ստեղծելով մենք վերադարձ չենք կատա-
րի դեպի ցեխայնութեանը:

Նման կասկածները վոչնչի վրա չեն հիմնված:
Յերբ մենք թեվակոխեցինք վերակառուցման շրջանը՝

արադ թափով ծավալելով սոցիալիստական արդյունաբերութիւնը, յերբ մենք այսօր ստեղծում ենք արդյունաբերութեան նոր ճյուղեր, ծավալում սոցմրցումն ու հարվածայնութիւնը և ընդհուպ ձեռնարկում արտադրական խնդիրների լուծմանը, — միութիւնների ներսում արտադրական սեկցիաներ ստեղծելը, սեկցիաներ, վորոնք ապահովում են ավելի մեծ քանակութեամբ բանվորական մասսաների ներդրումը արտադրական հարցերի լուծման գործում և նրանց անհամեմատ ավելի լավ սպասարկումը, ապա այդ վոչ միայն վերադարձ չի դեպի ցեխայնութիւնը, այլ պրոֆմիութիւնների կառուցվածքի արտադրական սեկցիաների ամրացում է, նրա փոխանցում ավելի բարձր աստիճանի:

Պրոֆչարթման պատմութիւնից հայտնի յէ, վոր միութիւններին կից առաջ գոյութիւն ունեցող սեկցիաները նկատվում էյին իբրև տուրք ցեխային տրամադրութիւնների: Առաջին անգամ նրանք ստեղծվեցին առանձին արհեստակցական միավորութիւնների լուծարքի շրջանում, արտադրական միութիւնների վերածվելու շրջանում: Մի քանի միութիւններում այդպիսի սեկցիաներ գոյութիւն ունեյին մինչև վերջին ժամանակներս:

Պրոֆմիութիւնների VII համագումարը, վորը կայացավ վերականգնման շրջանի ավարտման ժամանակ, արտադրական սեկցիաների կազմակերպման մասին վորոշում ընդունեց: VII համագումարից հետո արդյունաբերական խոշոր միութիւններում փաստորեն վոչ մի սեկցիա չկազմակերպվեց, այլ իրենց եյութեամբ արհեստակցական սեկցիաներ մնացին միայն այն միութիւններում,

միութիւններում, վորտեղ նրանք առաջվանից գոյութիւն ունեյին:

Յեթի դուրս վերցնեք սեկցիաների մասին 1922-1928 թվականներին հրատարակված կանոնադրութիւնները, ապա նրանց մեջ փոքր տարբերութիւն կգտնեք: Ինչո՞վ բացատրել նման յերևույթը: Այդ բացատրվում է նրանով, վոր պրոֆչարթման ուղղորտունիստական ղեկավարութիւնը արտադրական սեկցիաների հարցը դնում էր ձեռնարկին, իսկ փաստորեն արհեստակցական սեկցիաներ էր ստեղծում: Այդ, նրանց խոսքով, զիջում էր ցեխայնութեան առաջ:

Բնական է, վոր վերակառուցման շրջանում այդպիսի սեկցիաները ավելորդ պետք է լինեյին, սոսկ ցեխային վերնաշէնք, ուստի և լիկվիդացիայի յենթարկվեցին:

Ներկայումս, ինչպես քիչ առաջ ասացի, մենք մշտադրում ենք այլ, իբրք արտադրական սեկցիաներ ստեղծել. մենք այդ սեկցիաների առաջ խնդիր ենք դրնում ապահովելու առանձին ճյուղերի բանվորութեան մաքսիմալ ներդրումը արդյունաբերութեան կոնկրետ արտադրական հարցերի լուծման ու արտադրութեան ղեկավարման գործում, էլ ավելի ապահովելու և խնամքի առարկա դարձնելու բանվորների նյութական կենցաղային ու կուլտուրական ամենորյա կարիքների բավարարումը: Այս սեկցիաները պետք է ամուր կապվեն արտադրութեանը:

Կասկածները ցեխայնութեան վերադառնալու մասին, վորպիսին արտահայտում են մի քանի ընկերները, իրենց վրաքի տակ վոչ մի հող չունեն: Լուծելով արտադրական սեկցիաների հարցը, մենք մեզանկան պաշար կմղենք այն բոլոր ուղղորտունիստական ու քրեկոնիստական

99. 47065



նիտասակա՞ն տարրերի դեմ, վարոնք թերազնահաստեմ են արտադրական սեկցիաների կազմակերպման նշանակութունը և խեղաթյուրում են նրանց եյությունն ու գործնական աշխատանքը:

ՈՒԺԵՂԱՑՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍՈՍՁՆՈՐԴՈՂ ՊՐՈՒԹՅԱՆԵՐԻ ԲԱՆՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԵՋ

Գործարանում ևս մենք պետք է նոր ձեվերով վերակառուցենք աշխատանքը: Արտադրական խորհրդակցությունները, վորոնք դումարվում են բրիգադներում և ցեխերում, շատ բան են արել արտադրության պրոցեսների բարելավման ուղղությամբ: Հիմա պետք է ել ավելի առաջ գնալ: Խմբում, բրիգադում, ցեխում և այլ միավորներում արտխորհրդակցությունն դումարելու հետ միասին պետք է կիրառել ըստ պրոֆեսիաների արտխորհրդակցությունն հրավիրելու պրակտիկան: Մետաղագործական գործարանում, որինակի համար, մենք առաջարկում ենք դումարել ձուլողների, հալողների և այլ պրոֆեսիաների բանվորների առանձին-առանձին արտխորհրդակցություններ: Ըստ պրոֆեսիայի նման խորհրդակցություններ և հատուկ ժողովներ հրավիրելը կապահովի ավյալ ձևոնարկության առաջնորդող պրոֆեսիաների բանվորության աշխատանքի թերությունների ու նվաճումների հայտարարումը, փորձի արագ փոխանակումը, բանվորական առանձին խմբերի նախաձեռնության ավելի լիակատար գրասեփորումը և նրանց նյութական ու կուլտուր-կենցաղային կարիքների սպասարկման ուժեղացումը:

Միություններին կից արտադրական սեկցիաներ կազմակերպելու հետ միասին, ըստ պրոֆեսիաների

(ձուլողների, փակասագործների, բրտակալչչիվների, յենթավարպետների և այլն) հատուկ ժողովներ ու արտխորհրդակցություններ դումարելու պրակտիկայի լայն կիրառումը զարկ կտա սոցմրցման ու հարվածայնության ծավալման, վորովհետև միութենական աշխատանքի դրվածքի վողջ սիստեմը և կազմակերպչական կառուցվածքը կապահովեն բոլոր թերությունների վերացումը: Իսկ այդպիսի թերություններ մեզ մոտ դեռևս շատ կան: Մեզ մոտ չի կարգավորված ներգործարանային ու ներքեխային սլանափորումը, վատ է դրված հում նյութի մատակարարումը, շատ կան դեռևս մանր, յերբեմն հեշտ վերացվելիք թերություններ, վորոնք ջղայնացնում են բանվորին, թույլ չեն տալիս նրա նախաձեռնության զարգացումը, արգելակում են սոցմրցման ու հարվածայնության լայն ծավալումը, վիժեցնում են արգֆինսլանների կատարումը: Այս թերությունների վերացման գործում անկասկած խոշոր դեր կխաղան խրճրակի, ցեխի, բրիգադի ու գործարանի արդխորհրդակցությունները, բայց ավելի մեծ դեր կխաղան առաջնորդող պրոֆեսիաների բանվորների արտադրական խորհրդակցությունները: Ձեռնարկություններում շատ հաճախ լսում ենք այն մասին, թե վատ է աշխատում բրակովչիկը: Հետեվանքը լինում է այն, վոր ձախողվում է մի ամբողջ շարք ցեխերի աշխատանքը, ընկնում է արտադրանքի վորակը: Ինչո՞ւ ուրեմն չհամախմբել բրակովչիկներին և նրանց հետ այնպես աշխատանք կատարել, վոր ապահովի արտադրության նորմալ զարգացման խանգարող թերությունների վերացումը:

Մանածագործական ձեռնարկություններում առանձին յենթավարպետների վատ աշխատանքի պատճառ-

ուվ բանվորների դադարահաները ժամերով կանգ են առնում: Յենթավարպետների արտխորհրդակցութիւնները հնարավորութիւն կտան յերևան բերելու յենթավարպետների աշխատանքի թերութիւնները և փորձի փոխանակում կատարել, ողտադործել վրամանց նվաճումները վերացնել մյուսների աշխատանքի թերութիւնները: Այսպիսի արտխորհրդակցութիւնները խոշոր դեր կկատարեն մանածագործական գործարանների ամբողջ աշխատանքի բարելավման համար:

Մի քանի ձեռնարկութիւններում, մասնավորապես Ուկրաինայում, այսպիսի խորհրդակցութիւններ դուրսարելու փորձ ե յեղել արդեն և դրական խոշոր արդյունքներ ե տվել: Իհարկե, կլինեն մարդիկ, վորոնք հեռու չեն բղավելու, թե «դուք վերադարձ եք կատարում դեպի հինը, վոխանակ խորացնելու արտադրական սկզբունքը, դուք ստեղծում եք ցեխային կազմակերպութիւններ»: Այդպես բղավողների դիմակի տակ թագընված են մարդիկ, վորոնք վախենում են կոնկրետ դեկավարութիւնից, դերակազութիւն տալով «ընդհանուր» դեկավարութիւնը: Այդպիսի մարդկանց դեմ յեռանդուն պայքար պետք ե մղել, վորպետպի նրանք չխանգարեն մեզ աշխատելու այն մեթոդներով, վորոնք ապահովում են բանվորական առաջնորդող խմբերի չահարգումովածութիւնը տվյալ ձեռնարկութիւն աշխատանքի նկատմամբ, նրանց արտադրական նախաձեռնութիւն ծավալումը և արտադրութիւն պրոցեսների լավացումը: Մենք յեռանդուն պայքար պետք ե մղենք ամեն կերպ ծավալելու համար աշխատանքի այս մեթոդը, վորովհետեւ նա ապահովում ե պրոֆմիութիւնների կոնկրետ դեկավարութիւնը:

Ըստ պրոֆեսիաների արտխորհրդակցութիւններ և ժողովներ գումարելու սխտեմ ստեղծելով՝ մենք ամենեվին չենք հրաժարվում գործարանի, ցեխի, բրիգադի և ազրեգատի արտխորհրդակցութիւններ և ժողովներ դուրսարելու սխտեմից: Այս աշխատանքը մենք շարունակելու յենք, բայց նրա հետ միասին պետք ե ապահովենք այնպիսի ուշադիր վերաբերմունք առաջնորդող պրոֆեսիաների նկատմամբ, վորոնց հարցերն ընդհանուր ամամբ բավականաչափ չեն անդրադառնում բրիգադների ու ցեխերի ժողովներում:

Վերցնենք գործիքներ շինող բանվորներին: Թվում ե, թե չկա վոչ մի գործարան, վոր գանդաուվելիս չլինի գործիքների վատ վորակի մասին: Իսկ գործիքներ շինող բանվորների հետ վորեմի աշխատանք տարվում ե: Ուղղակի պիտի ասել, վոր վոչ մի աշխատանք չի տարվում: Իսկ միթե մենք նրա աշխատանքի համար թե՛ արտադրական և թե՛ նյութական դրդիչներ ստեղծած լինելինք, ապա այդ դրդիչները խոշոր դեր կկատարելին նրա արտադրանքի վորակի բարձրացման գործում:

Այդպես ե դրութիւնը նաև մյուս առաջնորդող պրոֆեսիաների բանվորների նկատմամբ: Ժողովներից ու արտխորհրդակցութիւններից բացի, մենք ձեռնարկութիւններում պետք ե ստեղծենք նաև լիազորների ինստիտուտներ ըստ պրոֆեսիաների:

Այսպիսով, ձեռնարկութիւններում ըստ գլխավոր պրոֆեսիաների ժողովներ և արտխորհրդակցութիւններ կազմակերպելու սխտեմը դուրսդրելով պրոֆմիութիւններին կից արտադրական սեկցիաներ կազմակերպելու սխտեմին, մենք հնարավորութիւն կտանք մեր միութիւններին կոնկրետ լուծում տալ այն հարցերին,

վորոնք դրված են թե՛ արտասուրձական խնդիրների կարգավորման և թե՛ բանվորների ամենորյա կարիքների բավարարման ուժեղացման բնագավառում:

Մ ՈՒՅՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՊԵՏՔ Ե ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆԻ ՆՐԱՆՑ ԱՌԱՋ ԴՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ

Ներկայումս կարեվորագույն նշանակություն է ըստանում պրոֆմիությունների ապարատի աշխատանքի մեթոդների ու նրա կառուցվածքի սահմանման հարցը, սկսած ՀԱՄԿԽ-ից մինչև ստորին պրոֆբընջը: Սոցիալիստական արդյունաբերության ծավալման տեմպերը հրամայական պահանջ են առաջադրում փոխելու նաև պրոֆմիութենական մարմինների աշխատանքի տեմպերը: Յես ձեր ուշադրությունն եմ սրում այս հարցի ուղղությամբ նրա համար, վորովհետև միութենական մարմինների աշխատանքի դանդաղկոտությունը, բանվորական մասսաների նախաձեռնությանն արագ ընդառաջելու և նրան ընթացք տալու անկարողությունը, և յերբեմն ղեկավարությունը, դրանք հնի մնացորդներն են և խանգարում են մեր աշխատանքը:

Պետք է հարցը սրել նաև աշխատանքի անուլանայնություն և նրա կատարման պատասխանատվության ուղղությունը: Պրոֆմիությունների աշխատանքի վերակառուցումն ու հետագա բարելավումը անցկացնելիս՝ այս հարցերը բացառիկ նշանակություն կստանան:

Առանձին ուշադրություն պետք է դարձնել դիրեկտիվների փաստական կատարումն ստուգելու հարցերին: Մենք դեռևս շատ ենք գրում, բայց քիչ ենք ստուգում, թե ի՞նչպես և այդ գրածը կյանքում կիրառվում:

Այս ամենը ապարատի աշխատանքի վորակի, ապարատում բանվոր կամավոր-հարվածայիններ ներդրավե-

լու հարցն է դնում: 16-րդ կուսակազմակազմարից հետո մեր ապարատում կամավորներ ներդրավելու ուղղությամբ մենք ունենք նվաճումներ (հատկապես ստորին ողակներում): Բայց այս աշխատանքը դեռևս չափազանց անբավարար է: Դեռ չափազանց շատ միջոցներ են ծախսվում ապարատի պահպանման վրա: Այս պլենումը վճռականորեն պետք է դնի բոլոր ողակների, հատկապես ստորին ողակների վճարովի ապարատի կրճատման հարցը: Դրա համար նպաստավոր պայմաններ մենք ունենք: 1931 թ. ավարտվելու յե ձեռնարկությունների փոխանցումը 7-ժամյա բանվորական որվա, վորի հետեվանքով բանվորները հնարավորություն կունենան ավելի շատ ժամանակ հատկացնել հասարակական աշխատանքին, մասնավորապես պրոֆաշխատանքին: Մեր խնդիրն է - վճարովի ապարատի խիստ կրճատում կատարել և այդ ապարատի աշխատանքը փոխադրել կամավորության հիմքերի վրա:

Միութենական բոլոր կազմակերպությունների կառուցվածքը, սկսած ՀԱՄԿԽ-ից մինչև միութենական մարմինների միջին սղակները, նույնպես լիովին չի բավարարում պրոֆմիությունների առաջ դրված խնդիրների լուծումը: Ներկայումս պետք է պարզորոշել այդ կառուցվածքը: Պրոֆմիութենական մարմինների կառուցվածքի վերակազմության ասպարիղում մենք բավական առաջադիմել ենք, բայց հարկավոր է, վոր ավելի առաջ դնանք:

ՀԱՄԿԽ-ի նախագահությունը այս պլենումին ներկայացնում է մի ամբողջ շարք առաջարկություններ, վորոնք կապված են միութենական մարմինների կառուցվածքի ճշտորոշման հետ, սկսած ՀԱՄԿԽ-ից մինչև ստորին պրոֆմարմինները:

Միջմիութենական և միութենական մարմինների կառուցվածքի մեջ մենք ուզում ենք խորացնել Փունկցիոնալ սեկտորների աշխատանքը՝ արդյունաբերութեան ճյուղերի խմբեր ստեղծելու միջոցով: Դուք հիշելիս կլինեք, վոր այս հարցը մի անդամ արդեն հարուցվել է պլենումում, բայց վերջնականապես չի հաստատվել: Երկայումս մի քանի միութեյունների կենտրոնական կոմիտեներում արդեն աշխատանքի դրական խաչոր փորձ դրոյություն ունի, վորը մեծ արդյունքներ է տրվել: Պլենումի նախապատրաստութեան հետևանքով յետ առիթ ունեցա մեծ ուշադրութեամբ դատել միութենական մարմինների կառուցվածքի խնդրով, և յիս պետք է ասեմ, վոր բոլոր կենտրոնական կոմիտեներից միայն մեծադարձների կենտրոնական կոմիտեն, նրանից հետո յերկաթուղայինների և վերջերս էլ մանածադործների կենտրոնական կոմիտեները հասկացել են արդյունաբերական ճյուղային խմբերի զուգորդումը Փունկցիոնալ սեկտորների հետ: Մյուս միութեյունները չեն յուրացրել այդպիսի զուգորդման նշանակութեյունն ու կարեւորութեյունը և պահպանել են իրենց հին կառուցվածքը:

Ինչո՞ւ յենք մենք այսպես պնդում արդյունաբերական ճյուղային խմբերի մասին: Նրա համար, վոր ճյուղային խմբեր ստեղծելով՝ պրոֆմիութենական կազմակերպութեյունների ուշադրութեյունը կբեմնովի արտադրութեյան հարցերի վրա, նրանք շարունակ իրազեկ կլինեն արդյունաբերութեյան համապատասխան ճյուղերի իրերի դրութեյանը և կկարողանան ժամանակին աղբջութեյուն դորել նրանց աշխատանքի վրա: Դժբախտաբար շատ կենտրոնական կոմիտեներ մինչև այժմ էլ այդ չեն հասկանում և ճյուղային խմբեր չեն կազմակերպել:

Այս պլենումում կառուցվածքային հարցերն այնպիսի լուծում պետք է ստանան, վոր առաջիկայում կառուցվածքի վաղաբարեալիք լինելու մասին վոչ մի խոսակցութեյուն չլինի այլևս:

Այժմ միջմիութենական մարմինների մասին: Մենք նախատեսում ենք ՀԱՄԿԾ-ում պահպանել սեկտորների սիտեմը, ճշտորոշելով նրանց Փունկցիաները և սեկտորների ներսում աշխատանքի առանձին հարցերի վերաբերյալ խմբեր ստեղծելով: «Արտադրութեյան և պլանավորման» սեկտորում մենք մտադիր ենք հետեւյալ ճյուղային խմբերն ստեղծել—ծանր արդյունաբերութեյան թեթև արդյունաբերութեյան, տրանսպորտի և կապի, գյուղատնտեսութեյան, աշխատավարձի ու տեխնիկական նորմավորման, պլանավորման ու հանդիպական արդիւնապանի, կապիտալ շինարարութեյան:

Նման կառուցվածքով «Արտադրութեյան և պլանավորման» սեկտորը հնարավորութեյուն կունենա վոչ թե ղեկավարել «առհասարակ», այլ յուրաքանչյուր ճյուղային խմբում ուսումնասիրել արդյունաբերութեյան առանձին ճյուղերին վերաբերող հարցերը, ընդհանրացնել նրանց փորձը և այն ծավալել պրոֆկազմակերպութեյունների վողջ ցանցում: Միջմիութենական մարմինների կառուցվածքը միատեսակ պետք է լինի ՀԱՄԿԾ-ի կառուցվածքի հետ: Միայն թե պետք է հաշվի առնել յուրաքանչյուր հանրապետութեյան, յերկրի, մարզի տնտեսական առանձնահատկութեյունները, արդյունաբերութեյան ճյուղերում դրաւված բանվորների թվական քանակութեյունը, աղբջային առանձնահատկութեյուններ և այլն:

Միութեյունների կենտրոնական կոմիտեներում և բաժիններում մենք նախատեսում ենք, ինչպես արդեն

ստորագրել և զայն անհաշիվ հարգանքով և սիրով արժանացնել և արդարեւ Փրունկցիոնալ սեկտորներին հետ:

Ստորաբաժանման հետեւանքով միությունների կենտրոնական կոմիտեները կմտտենան անմիջապես ձեռնարկություններին: Այն նախնական մշակումը վորը կատարել և մետաղադործների կենտրոնական կոմիտեն, ցույց և տալիս, վոր մետաղադործների միասնական միությունից անջատվող մի ամբողջ շարք մարդերում մարդային ողակներ չեն լինելու: Որինակի համար, մետաղադործական արդյունաբերության բանվորների միությունը վորը, միավորում և ընդամեն 61 ձեռնարկություն, Ուրալում ունենալու յե 32 ձեռնարկություն, Ուկրաինայում՝ 15, Մոսկվայի մարզում՝ 4, Նիժնի-Նովոգորոդյան յերկրում՝ 4 և մնացած մարզերում 1-2 տեղան ձեռնարկություն: Մետաղադործների կենտրոնական կոմիտեն, նշելով նոր առաջադրվող միությունների կառուցվածքը, գտնում և (թեև որիչինտիր կերպով, բայց շատ ճիշտ), վոր կոմիտե պետք և ունենալ միայն Ուկրաինայում, իսկ միության մարդային բաժին՝ Ուրալում: Մնացած մարզերում, համաձայն կենտրոնական կոմիտեյի նախադժի, հարկավոր չե միության մարդային բաժիններ ստեղծել, այլ գործարկումներին պետք և կապել անմիջապես կենտրոնական կոմիտեյի հետ:

Այսպիսով դուք տեսնում եք, թե ինչպես ստորաբաժանման հետեւանքով մեկ կողմից կենտրոնական կոմիտեները մտտենում են ձեռնարկությունների անմիջական ղեկավարությանը, իսկ մյուս կողմից՝ մի ամբողջ շարք մարդերում մարդային կոմիտեներ չունենալով ապարատի պահպանման ծախսերի խիստ խոշոր կրճատում և կատարվում:

Այսպիսի պայմաններում կենտրոնական կոմիտեն կկարողանա ավելի լավ ուսումնասիրել գործարանների աշխատանքը և գործարկումի միջոցով ղեկավարել ձեռնարկության աշխատանքը: Իբրև հետեւանք կատարվի այն, վոր կիրճատվի շրջաբերականների սխտեմը և նրանց բաղմացնելու աշխատանքը մարդային բաժիններում և կենտրոնական կոմիտեներում, կապահովի կենտրոնի վորոշումների արագ իրագործումը և աշխատանքների պարզորոշությունը: Միությունների ստորաբաժանման հետեւանքով կուժեղանա կենտրոնական կոմիտեների և միջմիութենական մարմինների գերը:

Այստեղ պետք և գնել միութենական և միջմիութենական մարմինների Փրունկցիաների սահմանապատման հարցը և աշխատանքի նկատմամբ ավելի վորոշակի պատասխանատվություն սահմանել:

Միջմիութենական մարմինները պետք և այժմ ել ավելի կենտրոնացնեն իրենց ուշադրությունը այնպիսի հարցերի վրա, վորոնք պահանջում են բոլոր միությունների միատեղ ձեռնարկումները: Իբրեւլ որինակ վերցնենք պրոֆկադրերի պատրաստման հարցը: Յեթե այսօր 20 կենտրոնական կոմիտեներից շատերն ունեն պրոֆկադրերի պատրաստման իրենց դպրոցներ, ապա 45 կենտրոնական կոմիտե ունենալիս ավելի նպատակահամար կլինի պրոֆկադրերի պատրաստությունը կենտրոնացնել միջմիութենական կազմակերպություններում՝ ՀԱՄԿԽ-ում, իսկ տեղերում և հանրապետություններում՝ յեկրային և մարզային պրոֆխորհուրդներում: Հարցն այդպես և դրվում նաև պարտադիր ուսման, անդրադիտության վերացման, մերձքաղաքային տնտեսության, քաղաքական կամպանիաների անցկաց-

ման և այլ ձեռնարկումների նկատմամբ: Այս հարցը ա-
վելի հանգամանորեն կմշակվի ՀԱՄԿԽ-ի նախադահու-
թյան և այս պլենումի սեկցիաների կողմից: Սակայն
մենք այնպիսի մի դրուժթյուն պիտի ստեղծենք, վորտեղ
միջմիութենական և միութենական մարմինների ֆունկ-
ցիաները ավելի վորոշակի կերպով սահմանազատվեն,
վորպեսզի հնարավոր լինի կասեցնել շրջաբերականների
և դերեկտիվների բազմացման հոսանքը: Մենք այնպի-
սի մի կարգ պետք է ապահովենք, վոր միութենական
և միջմիութենական մարմինները ժամանակին կարողա-
նան լուծել արտադրության և բանվորական մասսանե-
րի սոցիալ-կենցաղային ու կուլտուրական սպասարկ-
ման բոլոր հարցերը:

Ընկերներ, պրոֆմիություններ, վորջ վերկազմու-
թյունը պետք է կատարվի ըստ հնարավորության կարճ
ժամանակամիջոցում: Պետք է ամեն կերպ պայքարել
ձգձգման, խառնաշփոթության և ընթացիկ խնդիրնե-
րից կտրվելու փորձերի դեմ: Վերակազմություն անց-
կացնելիս մենք վոչ միայն չպետք է թուլացնենք մեր
աշխատանքը հնգամյակի յերրորդ, վճռական տարվա
խնդիրների կատարման ուղղությամբ, այլ հենց այդ
խակ վերակազմությամբ պետք է ապահովենք պրոֆմի-
ությունների դերի ուժեղացումը սոցիալիստական շի-
նարարության մեջ:

Վերակազմությունը պետք է ապահովի բանվոր-հար-
վածայինների նոր կադրերի առաջընթացումը պրոֆմիութ-
ենական ապարատի մեջ և դրանով խակ ուժեղացնի նոր
կազմակերպվելիք միությունների անմիջական ու կոու-
կրետ դեկավարությունը: Լիկվիդացիայի յենթարկվող
մարզային ողակների աշխատավորները պետք է ողտա-
դործվեն գլխավորապես ձեռնարկություններում:

ՈՒԺԵՂԱՑՆԵԼ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒ- ԹՅՈՒՆԸ, ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԽԱՎԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎԵԼ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՋ

Այս պլենումում մտքերի փոխանակությունն պետք
է ունենանք նաև դեպի ժողտնտեսությունը հոսող բան-
վորական նոր կադրերին միության մեջ ընդունելու
հարցի շուրջը: Միմիայն 1931 թ. ներդրավելու յե ա-
վելի զան 3 միլիոն մարդ: Բայց մենք գեուս չենք կա-
րողացել կարգավորել այս նոր կադրերին միության մեջ
ընդունելու հարցը: Վերջին կիսամյակի ընթացքում մի-
ության անդամների թիվն ավելացել է մոտավորապես
600.000 հոգով, այնինչ ժողտնտեսության մեջ մեկ և
կես միլիոնից ավելի մարդ է մտել: Պրոֆմիութենական
կազմակերպությունները չեն կարողանում ժամանակին
միության մեջ ընդգրկել այս նոր բանվորական կադրե-
րին:

Սոցիալիստական շինարարության ծավալման հե-
տեվանքով վերացված է դործադրկությունը: Գործա-
դրկության վերացման և բանուժի պակասության հետե-
վանքով մեջտեղից վերանում է միության մեջ մտնելու
ցանկությանը զարկ տվող դրդեչներին մեկը-առաջին
հերթի աշխատանքի ուղարկվելու առավելությունը,
վորպիսին ունեյին միության անդամները: Այս հանդա-
մանքը, ինչպես նաև միութենական մարմինների բյուրո
կրատական վերաբերմունքի և անճարակության տարբե-
րը հանդիպեցին այն բանին, վոր բանվորների զրպի մի
մասը, չնայած միության մեջ մտնելու ցանկությանը,
միությունից դուրս մնաց: Մեզ մոտ գեուս շատ տեղ
ունի միության մեջ ընդունելու ձեվականությունների
պահպանման հետ կապված բյուրոկրատիզմը. այդ ձե-

վախճանութիւններին իսկուցն և յեթ պետք ե վերջ առաւ։
Անհրաժեշտ ե, վոր մենք կաղմակերպչական վե-
րահառուցման հետ միասին, վորը բարեխաղում ե միու-
թեանական մարմինների աշխատանքի վորակը, նորեկ
բանվորների մտտ միութեան անդամ դառնալու խոշոր
շահագործութեան առաջացնենք։ Նոր կաղերբի մեծա-
զույն մասը դալիս ե գյուղից։ Նրանք իրենց հետ միա-
սին մանր-բուրժուական տրամադրութեաններ ան բե-
րում։ Պրոֆմիութեանների խնդիրն ե-այս կաղերբին
թրծել ձեռնարկութեանների պրոլետարական կաթսա-
յում, ուժեղացնել նրանց դասակարգային դաստիարա-
կութեանը, պրոլետարական խավերին միութեան մեջ
ընդգրկել։

Ներկայումս մենք հատուկ ուշադրութեան պետք ե
դարձնենք աշխատանքի այնպիսի բնագավառների վրա,
վորոնք զրոյում են միութեան մեջ մտնել և սերտորեն
շաղկապված են ինչպես արտադրական խնդիրների
լուծմանը, այնպես ել բանվորների նյութական և կուլ-
տուրական սպասարկման բարեխաղմանը։

**ՇԵՐՏԱՎՈՐԵԼ ՍՈՑԱԼԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ. ԱՅՆ ՍՊԱ-
ՍԱՐԿ Ի ԴԱՐՁՆԵԼ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՇԵՐԹԻՆ ՇԱՆՐ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ
ՃՅՈՒՂԵՐԻՆ**

Վերցնենք այնպիսի մի կարեւոր խնդիր, ինչպիսին
ե սոցիալական սպահովագրութեանը։ Տարեց տարի ա-
ճում են սոցիալական սպահովագրութեան Փոնդերը։
1931 տարվա սկզբին այդ Փոնդի միջոցները կաղում
եյին 2-128 միլիոն ռ.։ Սոցալահովագրութեան նշանա-
կութեանը բանվորների սպասարկման գործում և պե-

տալութեան կողմից այդ նպատակին հասնելու համար
միջոցները պարտավորութեան են դնում պրոֆմիու-
թեանների վրա առաջադրել սոցալի վողջ ցանցի արժա-
տեան բարեխաղման համար պայքարելու, նրա մար-
միններին բանվորական մասսաների սպասարկմանը մո-
տեցնելու նպատակով, նրա աշխատանքը վերակառուց-
ման յենթարկելու։ Հարցը։ Վերակառուցումը պետք ե
կապված լինի սոցալի աշխատանքի պրակտիկայից
բյուրոկրատիզմն արմատախիլ անելու խնդրի հետ։ Իրա
համար ել այժմ ամբողջ սրութեամբ դրված ե սոցալի
մարմինները Ֆարբիկաներին ու գործարաններին մոտե-
ցնելու հարցը։ Մի քանի ձեռնարկութեաններում մենք
ունենք արդեն սպահովագրական դանձարկղների կե-
տեր։ Հարկավոր ե վոր այդպիսի կետեր կաղմակերպ-
վեն բոլոր խոշոր ու միջակ ձեռարկութեաննե-
և առաջին հերթին արդյունաբերութեան
տալիսորդ ճյուղերում։ Այդ, ընկերներ, անհրա-
ժեշտ ե, ինչպես ասացի, նրա համար,
վորպեսզի սոցալի մարմինները մոտեցվեն
գործարանի բանվորութեանը։ Բայց հարկավոր ե միա-
ժամանակ ուժեղացնել գործարկումների հսկողութեանը
այս կետերի վրա։ Այս ասպարիդում առայժմ շատ քիչ
բան ե արված։ Այնինչ դանձարկղների գործարանային
կետերը խոշոր նշանակութեան ունեն, վորովհետեւ
նրանք սպասարկում են բանվորին՝ աշխատունակութե-
անից ժամանակավորապես զրկվելու և այլ բաղմամբիվ
կարեւոր դեպքերում։ Վորպեսզի հսկողութեանն ավելի
իրակա՞ն լինի, գործարկումներին պետք ե շահագորդուել
դանձարկղային կետերի կարգավորման և այդ կետերի
նախահաշիվով բաց թողնվող միջոցների անտեսման գոր-
ծով։ Մենք յենթադրում ենք, վոր դանձարկղային կե-

տերուս ամստեաման չետեվանքով ըստ նախահաշվի չծախսված միջոցների 50%-ը անհրաժեշտ է տրամադրել գործարանային կոմիտեյին օվյալ գործարանի բանվորների կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման համար: Այդպիսի դիրքավորումը անմիջական շահագրգռություն կառաջացնի գործարանային կոմիտեյների և բանվորների մոտ քանձարկղային կետերի աշխատանքի կարգավորման նկատմամբ, վճռահատ պայքար կծավալվի սիմուլյանտների դեմ, վորոնց վրա հիմա դեռ շատ դեպքերում հսկայական միջոցներ են ծախսվում:

Իսցի այդ, պետք է ուժեղացվի պրոֆմիությունների աշխատանքը կենտրոնական Սոցապվարչության բյուջեյի կազմության և յերկրային հանրապետության ու արդյունաբերական հատկացումների բաշխման գործում: Թե չե նայեցեք, թե ինչ է կատարվում մեզ մոտ: Մենք հիմա ստորաբաժանում, մանրացնում ենք միությունները: Ինչի՞ համար ենք մենք այդ անում: Նրա համար, վորպետզի պրոֆմիութենական դեկավարությունը մոտեցնենք միության անդամների սպասարկմանը ձեռնարկողության ներսում ել ավելի ներգրավենք բանվորներին արտադրական խնդիրների լուծման գործում: Իսկ սոցապը շրջադարձ կատարել է դեպի արտադրությունը: Ի՞նչ չափով է նա իր ուպերատիվ աշխատանքն ուղղել առաջին հերթին ծանր արդյունաբերության բանվորների սպասարկումը լավացնելու համար: Չափազանց աննշան չափով, ընկերներ: Իրա համար ել այսօր առավել քան յերբեք անհրաժեշտ է ուժեղացնել պրոֆմիությունների մասնակցությունը սոցապի ամբողջ աշխատանքի և մասնավորապես բյուջետային հարցերի մշակմանը, նպատակ դնելով միջոցներ

մեծազույն մասը բաժին հանելու արդյունաբերության ծանր ճյուղերում զբաղված բանվորների սպասարկմանը: (Մի ձայն տեղից-ևՄենք այդ մասին չեյինք մտածել): Այ, ընկերն ասում է, վոր այդ մասին չեն մտածել: Իրա համար ել անհրաժեշտ է, վոր մենք այնպիսի վորոշում ընդունենք, վորն ստիպի կենտրոնական Սոցապվարչության խորը մտածելու ծանր արդյունաբերության մեջ զբաղված բանվորների սպասարկման աշխատանքը բարելավելու մասին:

Ի՞նչպես անել այդ: Նախագահությունը գտնում է, վոր կենտրոնական Սոցապվարչության կենտրոնական գանձարկղի կողքին, վորը սահմանում է արդյունաբերության բոլոր ճյուղերի նախահաշիվները, հարկավոր է ճյուղային գանձարկղներ ստեղծել ծանր արդյունաբերության առաջնորդող ճյուղերում, որինակ՝ ածխի, մետալուրգիայի, մեքենաշինության, հանքարդյունաբերության և հիմնական քիմիական արդյունաբերության ճյուղերում: Այս գանձարկղների նշանակությունը ամենքի համար ակներեվ է, վորովհետեվ նրանք ամենից ավելի լավ են հաշվի առնում համապատասխան արդյունաբերության առանձնահատկությունները և ապահովում բանվորների լավագույն սպասարկումը: Ներկա դրությամբ, ածխարդյունաբերության մեջ աշխատող հանքափորը, վորի աշխատանքը շատ ծանր է, և վոր դրասենյակներում նստած աշխատավորներ սոցապսպասարկման տեսակետից հավասարեցված են:

Մենք պետք է շերտավորում մտցնենք առանձին կատեգորիաների սոցապսպասարկման գործում և այն ծառայեցնենք առաջին հերթին արդյունաբերության ծանր ու առաջնորդող ճյուղերին: Իա կպահանջի փոխել սոցապի ֆինանսական տնտեսության կարգը:

ՍՈՑԱԼԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՄԲ ՄՊԱՀՈՎԵԼ ՍՈՒԱԶԻՆ ՇԵՐԹԻՆ ՊՐՈՒԵՏԱՐԻԱՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱԳՐԵՐԻՆ

ՀԱՄԿԽ-ի V պլենումը պետք է ընդառաջ գնա պրոլետարիատի այն հիմնական կադրերի տրամադրութիւններին, վորոնք պահանջում են կարգավորել ժամանակավոր անաշխատունակութեան նպաստները տալու գործը : Մենք այստեղ պետք է պրոլետարիատի հիմնական կադրերի, արդյունաբերութեան գլխավոր ճյուղերի բանվորներին լավագոյն ապահովման սկզբունքը սահմանենք : Ի՞նչպիսի կարգ ենք մենք հանձնարարում սահմանել : Մենք, ընկերներ, նկատի ունենք այնպիսի մի կարգ սահմանել, վոր տվյալ ձեռնարկութիւնում 2 տարի և արտադրութեան մեջ 3 տարուց ավելի աշխատած միութեան անդամը լրիվ աշխատավարձ ստանա հիվանդութեան ամբողջ շրջանում, իսկ այն միութեան անդամները, վորոնք 2 տարուց ավելի աշխատում են տվյալ ձեռնարկութիւնում, ինչպես նաև այն լեռնադործներն ու կառուցողները, վորոնք ամբողջ տարին են աշխատում և տվյալ ձեռնարկութիւնում մեկից մինչև յերկու տարվա ստաժ ունեն, հիվանդութեան առաջին 20 օրվա համար՝ կստանան աշխատավարձի $\frac{3}{4}$ ը իսկ մնացած ժամանակվա համար՝ լրիվ աշխատավարձը : Միութեան այն անդամները, վորոնք մեկից մինչև յերկու տարի աշխատում են տվյալ ձեռնարկութիւնում, ինչպես նաև այն լեռնադործներն ու կառուցողները, վորոնք ամբողջ տարին են աշխատում, - տվյալ ձեռնարկութիւնում մինչև մեկ տարի՝ հիվանդութեան առաջին 20 օրվա համար՝ կստանան աշխատավարձի $\frac{3}{4}$, իսկ մնացած ժամանակվա համար՝ լրիվ աշխատավարձը : Միութեան այն անդամները, վորոնք մեկ տա-

րուց պակաս են աշխատում տվյալ ձեռնարկութիւնում, հիվանդութեան ամբողջ շրջանում նպաստ կստանան աշխատավարձի $\frac{2}{3}$ -ի չափով :

Այն բանվոր հարվածայինները, վորոնք թեկուզ մեկ տարուց ել պակաս են աշխատում ձեռնարկութիւնում, բայց աչքի յեն ընկնում արտադրութեան մեջ, սոցիալիստական կոնտրակտացիայի կարգով 2-3 տարի ժամանակով ամրացել են արտադրութեանը և գործարկոմի ու գործարանային վարչութեան կողմից ճանաչվում են իրերիվ հարվածայիններ, - հիվանդութեան ամբողջ շրջանում նպաստ պետք է ստանան լրիվ աշխատավարձի չափով :

Սրանով՝ ընկերներ՝ մենք դարկ կտանք հարվածայնութեան ծավալման ու բանվորների ինքնամարացման և վերջ կտանք չվողներին, վորոնք վիժեցնում են մեր սոցիալիստական շինարարութիւնը :

Վոչ միութեան անդամներին մենք առաջարկում ենք նպաստ տալ հիվանդութեան առաջին ամսում աշխատավարձի կիսի չափով, իսկ մնացած ժամանակվա համար՝ $\frac{2}{3}$ -ի չափով :

Այս վերջին միջոցը ճիշտ ենք համարում, վորովհետեւ խորհրդային պետութեան մեջ պրոֆմիութիւններում կազմակերպված բանվորներին պետք է առավելութիւններ տրվեն :

Այս բոլոր միջոցառումներն ուժեղ հարված կհասցնեն մեր շինարարութիւնը վիժեցնող չվողներին և միաժամանակ լրիվին կապահովեն պրոլետարիատի հիմնական կադրերը, կկարգավորեն սոցիալական ապահովութեան գործը և այն կածառայեցնեն սոցիալիստական շինարարութեան հաջող ծավալմանը : Չե՞ վոր այն կարգը, վորպիսին գոյութիւն ունի մինչև օրս, տար-

բերութիւնն չի դնում կադրային բանւորներին և չվող-
ներին միջեւ: Այնինչ բանուժի հոսունութիւնը ծանր
հարված է արդունաբերութեան կարևորագույն ճյու-
ղերի համար: Որինակի համար Փետրովսկի հանքերում
ապրիլ-հոկտեմբեր ամիսներում բանւորութեան կազմը
նորոգվել է 95 տոկոսով, «Սվարդա» հանքում՝ 76 տո-
կոսով, Կրասնի Սորմովոյում՝ 30 տոկոսով, Մակեև-
սկի գործարանում՝ 33 տոկոսով, Զլատոուստովսկի
գործարանում՝ 56 տոկոսով, Կադիևսկի կոկսո-բեն-
զոլային գործարանում՝ 28 տոկոսով:

Մեր հանձնարարած միջոցները խիստ կերպով կան-
դրադառնան նաև բանուժի հոսունութեան վրա:

Սոցիալական ապահովագրութեան բնադալատում
միութեան անդամների համար առավելութիւններ պետք
է սահմանել նաև հանգստյան տները, սանատորիա-
ները և կուրորտներն ուղարկելիս: Մենք պետք է այդ
ճանապարհը բռնենք, վորովհետեւ խորհրդային սկ-
տութիւնը պետք է առավելութիւններ ընձեռի կազ-
մակերպված բանւորներին, վորոնք իրենց պրոֆմիու-
թենական կազմակերպութիւններին միջոցով ամե-
նապակտիվ մասնակցութիւնն են բերում արտադրութեան
կառավարման և սոցիալիստական շինարարութեան ծա-
վարման գործում:

**ՓՈՒՈԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՍԱՐԿՂՆԵՐԸ ԼՍՎԱԳՈՒՅՆ
ԿԵՐՊՈՎ ՊԵՏՔ Ե ԲԱՎԱՐԱՐԵՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ
ՆՅՈՒԹԱԿԱՆ-ԿԵՆՑԱՂՍՅԻՆ ՈՒ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ
ԱՍԵՆՈՐՅԱ ԿԱՐԻՔՆԵՐԸ**

Յե՛ս նշում եմ բանւորներին նյութական-կենցաղային
և կուլտուրական ամենորոյա կարիքների բավարարման
ուղղութեամբ պրոֆմիութիւնների միջոցով կատարվող

աշխատանքն ուժեղացնելու չափազանց մեծ կարեւոր-
ութիւնը:

Պրոֆմիութիւնների այդ աշխատանքի ձեւերից
մեկը պետք է լինի միութեան անդամներին նյութական
ոգնութիւն ցույց տալը: Մենք պետք է կազմակերպենք
նոր տիպի փոխոգնութեան դրամարկղներ արդունաբե-
րութեան առաջնորդող ճյուղերի խոշոր և միջակ ձեռ-
նարկութիւններում: Այդ ճյուղերից յետ նկատի ունեմ
ածուխը, մետաղը, լեռնարդունաբերութիւնը, հիմնա-
կան քիմիական արդունաբերութիւնը և յերկաթու-
ղային տրանսպորտը: Արդունաբերութեան և տրանս-
պորտի այս առաջնորդող ճյուղերում պետք է ապահո-
վել բանւորներին ցույց տրվող ոգնութիւնը բացի այն
ոգնութիւնից, վորը նրանք ստանում են սոցիալա-
կան ապահովագրութեան օրենքներով: Փոխոգնութեան
այս դրամարկղների աշխատանքի ճիշտ դրվածքը կա-
պահովի պրոֆմիութիւնների ավելի հոգածու վերա-
բերմունքը բանւորների նյութական-կենցաղային ամե-
նորոյա կարիքների բավարարման նկատմամբ և խթան
կհանդիսանա անկազմակերպ բանւորների համար միու-
թեան մեջ մտնելու: Միաժամանակ բանւորներն ավելի
կհազարգուվեն արդունաբերութեան և տրանսպորտի
հիմնական ճյուղերի ձեռնարկութիւններին ամրանալու
գործով:

Այս դրամարկղների կազմակերպման համար զգա-
լի միջոցների կարիք կա, և մենք պետք է ապահովենք
այդպիսին:

Վո՞րտեղից վերցնել անհրաժեշտ գումարները:
Գործադրկութեան վերացման հետեւանքով պրոֆմիու-
թենական զգալի գումարներ են մնում, վորոնք առաջ
ծախսվում էին գործադուրկներին ոգնելու համար:

1928 թ. պրոֆմիությունները միության անդամ դործադուրկների ոգնության վրա ծախսել են 27.350.000 ռ., իսկ 1929 թ.՝ 31.200.000 ռ.: Հիմա, յերբ մեր յերկրում դործադրկությունը վերացված և, պրոֆմիութեանական այդ միջոցներն ազատ են և պետք է ոգտադործվեն փոխոգնության դրամարկղներ կազմակերպելու համար: Բայց յեթե մենք կամենում ենք ունենալ ուժեղ դրամարկղներ արդյունաբերության հիմնական ճյուղերի համար և նրանց միջոցով լուրջ կերպով դնել բանվորներին ոգնություն ցույց տալու դործը, ապա այդ գումարները բացահայտորեն անբավարար են: Ուստի, մենք առաջարկում ենք պրոֆմիութեանական բյուջեյց առանձնացնել 75 միլիոն ռուբլի, նրա վրա ավելացնելով ևս 75 միլիոն ռուբլի Սոցյալի միջոցներկց: Պրոֆմիություններն այս 75 միլ. ռ. պետք է հատկացնեն անդամավճարներկց և այն գումարներկց, վորպիսին ըստ կոյսայմանագրերի բաց են թողնում տնտեսական մարմինները դործարանային կոմիտեների ծախսերի համար: Այսպիսով, այս բոլորովին նոր տիպի փոխոգնության դրամարկղների համար մենք կատեղծենք 150 միլիոն ռուբլու մի հաստատուն Փոնդ, վորը տարեց-տարի պետք է լրացվի:

Այս տիպի դրամարկղներ պետք և կառուցվեն բոլորովին նոր հիմունքներով, քան մինչ այժմ յեղածները: Թանր արդյունաբերության և յերկաթուղային տրանսպորտի ձեռնարկություններում կազմակերպվող դրամարկղներն առանձին անդամավճարներ չեն գտնվելու: Այս դրամարկղների միջոցները պետք է բաժանել բանվորներին թե՛ վերադարձվելիք վարկի և թե՛ անվերադարձ նսպատի ձեւով: Ոգնության այս ձեւը կնսպատի պրոֆմիությունների մասքայական աշխատանքի աչ-

խուժացմանը: Բանվորը կզգա, վոր թիությունը հոգում է իր մասին, վորովհետեւ կտեսնի, վոր նա իրեն նյութական կոնկրետ ոգնություն և ցույց տալիս:

Դրա հետ միասին, մենք այնպիսի մի կարգ պետք և սահմաններ, ըստ վորի արտադրական ու պրոֆմիութեանական յերկարատեւ ստաթի տեր բանվորներին ցույց տրվող ոգնությունն ավելի զգալի լինի, քան քիչ ստաթ ունեցողներինը: Մենք հատուկ կանոնադրություն պետք է մշակենք, վորը կսահմանի նոր կազմակերպվելիք դրամարկղների միջոցով նսպատ տալու ամբողջ կարգը:

Ինչ վերաբերում է թեթեւ արդյունաբերության ձեռնարկություններին, ապա այնտեղ պետք է թողնել դոյություն ունեցող դրամարկղները: Ըստ վորում պետք է վճռականապես փոխել ու բարելավել այդ դրամարկղների աշխատանքը և ուժեղացնել պրոֆմիութեանական մարմինների ղեկավարությունը նրանց նըկատմամբ: Սրանով մենք ոգնած կլինենք թեթեւ արդյունաբերության բանվորներին, ինչպես նաև այն ձեռնարկություններին, վորոնք նոր տիպի դրամարկղներ չեն ունենալու: Փոխոգնության այս դրամարկղները պետք է աշխատեն նաև դործարկումների ամենորյա և անմիջական ղեկավարությամբ:

Յեթե հաշվի առնենք, վոր դոյություն ունեցող դրամարկղներին անդամազրված է միության անդամների մոտ 25 տոկոսը, և վոր այդ դրամարկղների Փոնդը հավասար է մոտ 50 միլիոն ռուբլու, ապա պարզ է, վոր այս դրամարկղների վողջ աշխատանքի կարգավորումը խոշոր դեր կխաղա թեթև արդյունաբերության բանվորների դրությունը բարելավելու դործում:

ԳԻՍՍՉՈՒՐԿ ԶԱՆԵԼ ՖՈՒԲՐԸ, ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ ՉԵՆԱՐԿՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆԿՐԵՏ ԱՌԱՆՁԱ- ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այժմ անցնենք բանվորների կենցաղի բարելավման ֆոնդին (ՖՈՒԲՐ)։ Պետք է բարձրացնել պրոֆմիլու-թյունների դերը ՖՈՒԲՐ-ի միջոցների ոգտագործման խնդրում։ ՖՈՒԲՐ-ի միջոցները տարեց տարի ավելա-նում են։ 1928-29 թ. ունեյինք 110 միլ. ռ., 1929-30 թ.՝ 220 միլ. ռ., իսկ 1931 թ. միայն ԺՏԳԽ-ի և Մա-տակարարման Ժողկոմատի կողմից պլանավորվող ար-դյունաբերության գծով ունենալու յենք 285 միլ. ռ.։ Ֆոնդի միջոցները տարեց տարի զգալիորեն ավելա-նում են և ՖՈՒԲՐ-ի միջոցների նպատակահարմար բաշխման հարցը խոշոր նշանակություն է ստանում։ Այնինչ այդ միջոցները հաճախ ծախսվում են վոչ իրենց նպատակին։ Որինակի համար, Մոսկվայի կաշվար-դյունաբերության մեջ ՖՈՒԲՐ-ի միջոցներով գնված են յերաժշտական գործիքները։ «Կարմիր Հոկտեմբեր» գործարանում գործարկոմի նիստերի դահլիճի կահա-վորումը գնել են ՖՈՒԲՐ-ի միջոցներով և այլն։

Այս միջոցների ծախսման վերաբերյալ տեղեկու-թյունները նույնպես ցույց են տալիս, վոր ՖՈՒԲՐ-ը չի ոգտագործվում։ Այսպես, 1928-29 թ. ծախսված է ՖՈՒԲՐ-ի 84 %-ը միայն, իսկ տեղական արդյունա-բերության գծով՝ ընդամենը 72 %։

Ի՞նչ է հարկավոր այս գործը կարգավորելու հա-մար։ Հարկավոր է, ամենից առաջ, դադարեցնել այն խոսակցությունները, թե ՖՈՒԲՐ-ը դիմազուկ է դարձված, և բանվորների կենցաղի բարելավման

ֆոնդերը պահպանել տրեստներում ու այն տնտեսական միավորություններում, վորտեղ տրեստներ չկան։ Դի-մազուկ դարձնել ՖՈՒԲՐ-ը թողնելով այն միայն ծա-նրը արդյունաբերության համար՝ աննպատակահար-մար է, վորովհետև ձեռնարկության հասույթից կազ-մվող այս ֆոնդի սահմանումը դարկ կտա տվյալ ձեռ-նարկության բանվորների ակտիվությանը։ Դրա հա-մար ել աննպատակահարմար է ՖՈՒԲՐ-ը կտրել ձեռ-նարկությունից, դիմազուկ դարձնել, բաժանել ար-դյունաբերության առանձին ճյուղերի վրա։ Այնուհե-տև, անհրաժեշտ է կանոնավորել ՖՈՒԲՐ-ի միջոցների հավաքը։ Մենք առաջարկում ենք կաղմակերպել ՖՈՒԲՐ-ի հատուկ կոմիտե։ Այս կոմիտեյի մեջ պետք է մտնեն ԺՏԳԽ-ի, ՀԱՄԿԽ-ի և Աշտոլկոմատի ներկա-յացուցիչները։ Կոմիտեյի նախագահը պետք է լինի ՀԱՄԿԽ-ի ներկայացուցիչը։ Այս կոմտեն պետք է հո-գա միջոցների և հատկացումների հավաքման մասին։ Նա պետք է արմատապես վերակառուցի ՖՈՒԲՐ-ի մի-ջոցների ծախսման պրակտիկան, բաշխման այնպիսի կարգ սահմանելով, ըստ վորի ՖՈՒԲՐ-ի բոլոր միջոց-ների վոչ պակաս՝ քան 75 %-ը ծախսվի բանվորական բնակչինարարության ու սոցիալ-կենցաղային հիմնար-կությունների վրա, իսկ 25 %-ը կուլտուրական կա-րիքների վրա։ Դրա հետ միասին պետք է ձգտել, վոր-պեսզի ՖՈՒԲՐ-ի միջոցները բաշխվեն տվյալ ձեռնար-կության կոնկրետ առանձնահատկությունների խիստ հաշվառումով։ Որինակի համար՝ տեքստիլ արդյունա-բերության մեջ, վորտեղ գերակշռող է հանդիսանում բանվորուհու աշխատանքը, ՖՈՒԲՐ-ի միջոցների զգա-լի մասը պետք է ծախսվի մսուրների, մանկահրապա-

բաղների և այլ սոցիալ-կենցաղային հիմնարկների կա-
ռուցման վրա, վորովհետև նրանք բանվորուհուն հնա-
րավորութիւն կտան ազատագրվել կենցաղային կախ-
վածութիւնից և այսպիսով կհեշտացնեն նրա աշխա-
տանքը արդունաբերութեան մեջ: Իսկ որինակի համար
մեծադի արդունաբերութեան դործարաններում, վոր-
տեղ բանվորուհիների տեսակարար կշիռը բանվորու-
թեան ընդհանուր թվի մեջ մեծ է, ՅՈՒԻԲ-ը այլ կերպ
պետք է ծախսվի: Հարկավոր է, վոր ՅՈՒԻԲ-ի կոմի-
տեն և ՀԱՄԿԻՍ-ը մշակեն բանվորների կենցաղի բարե-
լավման ֆոնդի ծախսման կարգը այն հաշվով, վոր
հնարավոր լինի շերտավորված ձևով մոտենալ արդուն-
աբերութեան յուրաքանչյուր մի ճյուղին, հաշվի առ-
նելով նրա առանձնահատկութիւնները և այդ առանձ-
նահատկութիւններին համապատասխանող ուղղու-
թիւն առ ՅՈՒԻԲ-ի միջոցների ծախսմանը:

ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՎՐԱ, ՄԱՍՆԱԿՑԵԼ ՆՐԱ ԱՍԵՆ ՈՐՅԱ ՍՇԻԱՏԱՆՔԻՆ

Կուտակցութեան կենտրոնական կոմիտեի պլենու-
մը մատնանչեց, վոր անհրաժեշտ է վերակառուցել
կոոպերացիայի վողջ աշխատանքը՝ առաջին հերթին
սոցիալիստական շինարարութեան կարևորագույն բնա-
ղավառներն ապահովելու և մատակարարման դործը
արտագրական պլանների կատարման, աշխատանքի ար-
տադրողականութեան բարձրացման, բանուժի հոսու-
նութեան դեմ պայքարի և աշխատանքի կազմակերպման
սոցիալիստական ձևերի (սոցմրցում, հարվածայնու-
թիւն) խրախուսման հետ շարկապելու ուղղութեամբ:
Անհրաժեշտ է, վոր մենք արմատական տեղաշարժ ա-

ռաջացնենք պրոֆմիութիւններին բոլոր ողակների աշ-
խատանքի մեջ և ապահովենք նրանց հիմնական մաս-
նակցութիւնը կոոպերացիայի ամենորջա աշխատան-
քին, բոլոր կոոպերատիվ մարմինների աշխատանքի
վրա բանվորական հսկողութիւն կազմակերպելուն:
Մենք շատ ենք խոսում այն մասին, թե հարկավոր է
բանվորական հսկողութիւն կազմակերպել, բայց մենք
դեռևս չենք շոշափել այն ողակները, վորոնցից պետք է
բռնել կոոպերացիայի աշխատանքն իրոք հսկողութեան
տակ առնելու և նրան կոնկրետ աջակցութիւն ցույց
տալու համար:

Այժմ մենք հետևյալն ենք առաջարկում—ՀԱՄԿԻՍ-ը
պետք է ակտիվ մասնակցութիւն ունենա Յենտրոսո-
յուզի աշխատանքներին: Յենտրոսոյուզի և կոոպերա-
տիվ մարմինների բոլոր պլանները, վորոնք վերաբե-
րում են բանվորական մատակարարմանը, մերձադա-
քային տնտեսութիւններին, կոոպերացիայի ֆինանս-
ներին և այլն, պետք է մշակվեն ՀԱՄԿԻՍ-ի և պրոֆ-
միութենական մարմինների մասնակցութեամբ: Մենք
պետք է վոչ միայն քննութեան առնենք ու մշակենք
Յենտրոսոյուզի և այլ կոոպերատիվ մարմինների պլան-
ները, այլև հսկողութեան վերջնեք այդ պլանների
փաստական կատարումը: Հիշեցեք մատակարարման
բոլոր հայտարարված վնասարարութիւնը, յերբ թե՛
պլանների կազմութիւնը և թե՛ նրանց կոնկրետ կերա-
ուումը գտնվում է յին վնասարարների ձեռքում: Հետե-
վանքը լինում էր այն, վոր ապրանքներն ուղարկվում
էին վոչ այնտեղ, ուր վոր պետք էր: Մի շարք տեղե-
րում ստեղծվում էր ապրանքի կուտակում, իսկ մյուս
տեղերում՝ ապրանքի լիակատար բացակայութիւն:

Գործի թիւութիւնները պլանները քննութեանն ու մշակմանը մասնակցելու գործն այնպէս պետք է դնեն, վորով ապահովվի կոոպերացիայի ոպերատիվ պլանները կատարման իրական ու սիստեմատիվ վերահսկողութիւնը և վերլուծելն վնասարարութեան մնացորդները: Կոնկրետ՝ Ինչպէս անել այդ: Յենտրոսոյուզը, ասենք թե, բամբակագործական արդյունաբերութեան հետ պայմանագիրը և կնքում վորոշ քանակութեամբ մանուֆակտուրա տալու մասին: Այդ մանուֆակտուրան սովորաբար չի մտնում Յենտրոսոյուզի պահեստները, այլ ամբիջպէս գործարանից ուղարկվում և կոոպերացիայի բաշխիչ խանութները: Ո՞վ է վոր պետք է հսկողութեան տակ առնի մանուֆակտուրայի բարձումն ու առաքումը ըստ հասցեյի, իսկ հարկ յեղած դեպքում՝ նաև աջակցութիւն ցույց տա:—Ձեռնարկութեան գործարկումը: Նրա համար հեշտ է հսկել և ստուգել, թե հասցեները շիթութիւնը չկա՞րդ յոք, ուղարկվող ապրանքի սպեցիֆիկացիան համապատասխան է արդոք և այլն: Սրանով նա նպաստած կլինի Յենտրոսոյուզի պլանների կատարմանը: Այսպիսի Փունկցիաներ դրվում են նաև միութենական և միջմիութենական մարմինների բոլոր ողակները վրա: Նրանցից յուրաքանչյուրի գործն է՝ անմիջական հսկողութիւն սահմանել համապատասխան կոոպերատիվ մարմինների և սպառման առարակներ արտադրող ձեռնարկութիւնները աշխատանքի վրա: Այդ կլինի Յենտրոսոյուզի ոպերատիվ գործունեութեան իսկական և իրական վերահսկողութիւն, վորը կապահովի վորջ կոոպերատիվ ցանցի աշխատանքի բարելավումը: Կոոպերացիայի աշխատանքի վրա

բանվորական հսկողութիւն սահմանելու գործին անհրաժեշտ է անպայման լայն շարժումով մասնակցից դարձնել բանվոր-հարվածայիններին, վորովհետև միմիայն այս պայմանով մենք կկարողանանք ապահովել հրահողութեան առավելագույն եֆեկտիվութիւնը:

Յերկու հազարից ավելի բանվորութիւն ունեցող գործարաններում անհրաժեշտ է կազմակերպել գործարանային կոոպերատիվներ ընտրովի վարչութիւններով: Կոոպերատիվ ընդհանուր սիստեմի մեջ մտնող գործարանային այս կոոպերատիվների աշխատանքի պատասխանատիւութիւնը պետք է դրվի գործարանային կոմիտեյի վրա: Գործարանային կոմիտեն պատասխանատու պետք է լինի փակ բաշխիչի, գործարանային կրպակի, ճաշարանի, խողարուծարանի և կաթնատընտեսական ֆերմայի աշխատանքների համար: Մեկ խոսքով՝ բոլոր այն ձեռնարկութիւնների համար, վորպիսին ունի տվյալ կոոպերատիվը:

Գործարկումը պետք է նույնպէս աղդանշան տա այն անկարգութիւնների մասին, վորոնք տեղի յեն ունենում գործարանային կոոպերատիվի ներսում և վորոնք կախված են վոչ թե նրանից, այլ վերադաս կոոպմարմիններից:

Այսպիսով, մենք կստեղծենք հասարակական, բանվորական կոնտրոլ: Այդ հնարավորութիւն կտա վերացնելու այն խայտառակութիւնները, վորոնք տեղի յեն ունենում կոոպերատիվ սիստեմի աշխատանքում: Ահա յեթե մենք այսպէս դնենք աշխատանքը, այն ժամանակ կոոպերացիայի աշխատանքում միութիւնները՝ ունենալիք մասնակցութեան հարցերի շուրջ դատարկ շատախոսութիւններ անելուց մենք կանցնենք կոնկրետ

գործողութիւններն, կոնկրետ աշխատանքի: Մենք կողմնակից կոտայերացիային կազմակերպելու բանամտակարարման գործը, բանվորների սպասարկման գործը, մենք կոտայերացիան կղարձենք այնպիսի մի գործիք, վորն ընդունակ լինի ապահովելու առաջին հերթին սոցիալիստական շինարարութեան կարևորագույն բնագավառները, մենք նրան արտադրական ծրագրերի կատարման սպասարկու կղարձենք: Հարցը այսպես կոնկրետ դնելով՝ մենք կկարողանանք շատ ավելի արագութեամբ կարգ ու կանոն մտցնել կոտայերատիվ սխտեմի մեջ:

ԿՈՒՊԱՅՍԱՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՅՈՎ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԵԼ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՊԱՍՆԵՐԻ ՀԱՍԱՐ

Կոլպայմանագրերի հարցում ևս մենք պետք է առավելութիւններ ապահովենք միութեան անդամների համար: Այս առավելութիւնները չափազանց կարևոր նշանակութիւն ունեն պրոֆմիութիւնների վողջ աշխատանքի համար: Մենք բոլորս ասում ենք, մեր ձեռնարկութիւններում բավականաչափ վորակյալ բանուժիկա: Իսկ միթե քիչ են միութեան այնպիսի անդամներ, վորոնք մի քանի տարի աշխատում են ձեռնարկութիւններում և կարող եյին առաջ քաշվել ավելի վորակյալ աշխատանքի: Անհրաժեշտ է պարտավորեցնել տնտեսական կազմակերպութիւններին և պրոֆմիութիւններին արտադրութեան մեջ աշխատող լավագույն բանվոր-հարվածայիններին ավելի շուտ-շուտ առաջ քաշելու վորակյալ աշխատանքի: Մի քանի ժամանակ առաջ յես առիթ ունեցա լինել մի գործարանի ելեկտրական յեփման ցեխում: Չնայած այդտեղ շատ

արագութեամբ են վորակավորվում, բայց պրոֆմիութիւնները և տնտեսական մարմինները նրանց առաջը չան հնարավորութիւնը չեն ապահովում: Յեւ այդ այն ժամանակ, յերբ մի ամբողջ շարք գործարաններ վորակյալ յեփող վարպետներ չունեն: Բայց այս գործարանում ուրիշ կարիք ունեցող գործարանների համար յեփողներ տալու նպատակով վորակյալ կարգերը պատրաստելու ուղղութեամբ վողջինչ չի արվում: Մինչև որս ել ամենաարհամարական վերաբերմունք ե նկատվում բանվորների առաջը չան ու վերավորակավորման նկատմամբ: Այս ուղղութեամբ վճռական բեկում է հարկավոր: Բավականաչափ արտադրական ստաժի և համապատասխան ուսման տեր միութեան անդամներին պետք է փոխադրել ավելի վորակյալ և ավելի լավ վարձատրվող աշխատանքի: Այդ պետք է նախատեսել կոլեկտիվ պայմանագրում:

Այնուհետև՝ վերցրեք բանուժի վերավորակավորման հարցը: Ինչո՞ւ համար մենք չպետք է կարողանանք կոլպայմանագրերով պարտավորութիւն դնել տնտեսական մարմնի վրա վերավորակավորման յենթարկելու վորոչ քանակութեամբ պրոֆանդամների, վորոնք բավական յերկար ժամանակ աշխատում եմ տվյալ ձեռնարկութիւնում:

Սրանք չափազանց կարևոր խնդիրներ են, վոր պետք է, կատարեն պրոֆմիութիւնները: Այն ժամանակ ավելի հետամնաց բանվորներն անգամ կտեսնեն, վոր պրոֆմիութիւններն իրոք հողում են իրենց մասին և կոնկրետ միջոցներով ապահովում են սոցմրցման և հարվածայնութեան խթան հանդիսացող աղբակները:

Այսոր մեր արդիւնաբերութիւնը տեսնելիպայես

վերադինվում ե: Մտցվում ե նոր սարք, ավելի լավ դադդահաներ: Նրանց վրա փոխադրման կարգով պետք ե դնել գերադանցապես միության անդամներին, լավագույն բանվոր-հարվածայիններին:

Կոլպայմանագրերի ըննությանը մեզ մոտ իրավունք ունեն մասնակցելու բոլոր աշխատողները, վորովհետև կոլպայմանագրերը սահմանում ե բոլոր բանվորների աշխատանքի, արտադրության և նյութականկենցաղային դրության հիմնական պայմանները: Միության անդամների առանձին ժողովներ չեն գումարվում: Հարց ե ծագում—եւ ինչո՞ւ մտնել պրոֆմիության մեջ, յերբ կարելի յե առանց այդ ել ունենալ այն իրավունքները, ինչ պրոֆմիության անդամը: Պրոֆմիությունները այստեղ վորոշակի սահման պետք ե գծեն միության անդամների և վոչ-անդամների միջև, առավելություններ ընձեռնելով միության անդամ բանվորներին: Մասնավորապես արտադրանքի նորմաների և գրնահատումների հարցերը դնելիս պետք ե միության անդամների առանձին ժողովներ գումարել և այդպիսով առավելություն տալ միության անդամներին չկազմակերպված բանվորների համեմատությամբ:

Իսպ. և այնպես, միության անդամների համար վորոշ առավելություններ վերապահելու հետ միասին, պրոֆմիությունները ավելի կոնկրետ կերպով պետք ե դնեն կոլպայմանագրով հանձն առած պարտավորությունների կատարման պատասխանատվության հարցը միության անդամների նկատմամբ: Միության անդամները արգֆինպլանների կատարման համար պատասխանատու պետք ե լինեն պրոֆմիության առաջ, վորը նրանց անունից կոլպայմանագիր ե կնքում: Մենք մին-

չեւ այժմ ունենք դեռևս մեր շարքերում միության անդամներ, վորոնք չեն մասնակցում «ոցմրմանն ու հարվածայնությանը, այնինչ պրոֆմիության անդամ լինելը նրանց վրա պարտավորություն ե դնում հանդես բերել իրենց նախաձեռնությունը այս բնագավառում և իրենց յետևից տանել չկազմակերպված մասսային: Միության անդամները պարտավոր են ճշտիվ կատարել արտադրողականության, արտադրանքի վորակի, սարքավորման նկատմամբ խնամքոտ վերաբերմունքի այն բոլոր պայմանները, վորոնք բղխում են կոլպայմանագրից: Կոլպայմանագրի խախտումը միության անդամների կողմից պրոֆմիութենական դիսցիպլինայի խախտում պետք ե համարվի:

Ընկերնե՛ր, տարեց-տարի ավելանում են կապիտալ ներդրումները, հենց միմիայն 1931 տարում ծրագրված ե 5 մլր. ուղբուլ ներդրում կատարել: Պարզ ե, վոր այս ներդրումները զգալիորեն կուժեղացնեն մեր ձեռնարկությունների տեխոլինավորումը: Իսկ այդ ել իր հերթին տեխնիկական նորմավորման հարցն ե դնում իր մեծությամբ: Այնինչ տեխնորմավորումը մեզ մոտ դեռևս պատշաճ բարձրության վրա չե, և այդ շատ հաճախ փչացնում ե ամբողջ գործը: Նոր սարքավորումը, վորը հնի հանդեպ զգալի առավելություններ ունի և ավելացնում ե արտադրողականությունը շնորհիվ ավելի կատարելագործված տեխնիկայի, անպայման պետք ե հանդի արտադրանքի նորմաների վերանայման և արտադրական ձեռնարկությունների ավելադման: Պրոֆմիությունները հիմնականորեն շահագրգռված են արդյունարբության տեխոլինավորման առավելագույն

ողտադործմամբ: Ուստի անհրաժեշտ է, վոր մենք ձեռ-
տենք ամենակարճ ժամանակամիջոցում արտադրանքի
նորմաները համապատասխանեցնել ձեռնարկություն-
ների տեխնիկայորմանը: Հարկավոր է, վոր միության
անդամներ ավելի մեծ չափով մասնակից դարձնել
տեխնորմավորման, տարիֆների և տարբեր վորակա-
վորումների սահմանման աշխատանքներին: Մեր ձեռ-
նարկություններում այս աշխատանքը վերջերս թուլա-
ցել է և ներկայումս հարկավոր է այն դնել պատշաճ
բարձրության վրա:

Տեխնորմավորման աշխատանքին պետք է ամեն
կերպ մասնակից դարձնել ամենից ավելի վորակյալ և
արտադրական մեծ ստաժի տեր բանվորներին, վորպես-
զի նրանք, հիմնվելով իրենց փորձի վրա, ոժանդակեն
նշելու արտադրանքի այնպիսի նորմաներ, վորոնք հնա-
րավորություն տան լիովին ոգտադործելու ձեռնարկու-
թյունների սարքավորումը:

Միություններն ուշադրություն պետք է դարձնեն
նաև արտահագուստի ճիշտ ոգտադործման հարցերին:
Այն նյութերը, վոր մենք ունենք մեր տրամադրության
տակ արտահագուստի փաստական ծախսման մասին,
ցույց են տալիս մի շարք աննորմալություններ: Այսպես,
որինակ, Չեկյաբատրոյում ընդամենը 13-500 բանվոր
կա, իսկ արտահագուստ են դուրս դրել 23 հազար հոգու
համար: Ուրալմաշստրոյում 15 հազար հոգու արտա-
հագուստ են տվել, իսկ ընդամենը 9,000 բանվոր կա:
Միլիոնույն ժամանակ մի ամբողջ շարք դործարաններ
բավարար չափով արտահագուստ չեն ստացել:

Այս կողմի վրա հատուկ ուշադրություն պետք է
դարձնել:

Արտահագուստ պետք է սրվի միայն ձեռնարկու-
թյուններում աշխատելու համար: Դրանով մենք հար-
ված կհասցնենք չվորներին, վորոնք դալիս են մեր ձեռ-
նարկությունները, աշխատում են ընդամենը մի քանի
օր, հետո դնում և հետքը տանում արտահագուստը,
մինչդեռ կադրային բանվորը սուժում է արտահագու-
ստի բացակայության պատճառով:

Մենք այս խնդրում ամեն դնով պետք է կարգ ու
կանոն մտցնենք:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ ՊԵՏՔ Ե ԶԱՐԿ ՏԱ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԿԱՐԳԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒՅՑԱՆ ԾԱՎԱԼՄԱՆԸ

Յես ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել նաև
բանվորների և վարչա-տնտեսական անձնակազմի պար-
զեվատրման վրա: Աշխատանքի հաջող կատարման պար-
զեատրումը լայն չափերով կիրառվում է արդեն մեր
ձեռնարկություններում: Բայց և այնպես, նա դեռելիս
չատ հեռու չե ասահովելու բանվորական գյուտարա-
րության և բանվոր դասակարգի արտադրական ակտի-
վության այլ ձևերի հրահրումը: Պայքարը սոցմրցման
ծավալման համար, բանվորական գյուտարարության
դարգացումը, բանվորների ուսցիոնալիզատորական և
այլ առաջարկությունների բազմացումը պահանջում են
ավելացնել պարզեատրման ֆոնդերը մեր ձեռնակու-
թյուններում: Պարզեվատրման համար գոյություն ու-
նեցող ֆոնդերը շատ քիչ են և այդ պատճառով ել բան-
վորը չի շահագրգռվում առաջարկություններ և գյու-
տեր ներկայացնելու ուղղությամբ: Բերենք մի որինակ:
Խարկովի ԳԵԶ դործարանում 14 ամսվա ընթացքում

բանվորները 1762 առաջարկ են արել, վորից ընդունվել է ընդամենը միայն 352-ը, 478-ը մերժված է, իսկ մընացածները, ասում են, ողում է մնացել: Ընդունված առաջարկները 325.000 ո. տնտեսում են տվել, իսկ պարզեվատրման գումարները յեղել են անբավարար: Մենք այստեղ բացահայտ անհամապատասխանութուն ենք նկատում բանվորների առաջարկների կատարման հետեվանքով ստացվող տնտեսման և այդ նույն բանվորներին տրվող պարզեվատրման միջև: Մենք հարց պետք է դնենք համապատասխանեցնելու պարզեվատրման Փոնդերը բանվորների առաջարկների կատարման հետեվանքով ստացվող տնտեսման հետ: Պրոֆմիլությունները պետք է հոգ տանեն այն մասին, վոր բանվորների առաջարկությունները արագ քննության առնվեն և իրացվեն: Բանվորների առաջարկությունների քննությունը լայն չափերով մասնակից պետք է դարձնել ձեռնարկություններում աշխատող ինժեներների, բարձրագույն ուսումնական հիմարկներում սովորող և գործարաններում արտադրական պրակտիկա ունեցող ուսանողներին: Յեթե տվյալ գործարանի ուսումնական բարձրագույն ուսումնական հիմարկություն գոյություն ունի, ապա նրա ուսանողներին պետք է գործարանին ամրացնել և ապահովել նրանց տեխնիկական աջակցությունը բանվորների առաջարկությունների իրացման գործին: Այստեղ յերկուստեք ոգուտ կա թ'ե ուսանողների և թ'ե բանվորների համար:

Մենք պետք է պարզեվատրման Փոնդեր կազմակերպենք ԺՏԳԽ-ին, Հաղճան Ժողկոմատին, Հողժողկոմատին և Մատակարարման Ժողկոմատին կից: Այս Փոնդերը պետք է ստեղծվեն տասը տոկոսային հատկացում-

ներից, այն միջոցներից, վորոնք բաց են թողնվում բընակարանային ու կուլտուր-կենցաղային շինարարության համար, և պետք է ոգտագործվեն պարզեվատրելու այն ձեռնարկությունները, վորոնք կգերակատարեն քանակական և մանավանդ վորակական ցուցանիշների պլանները:

1931 թ. ԺՏԳԽ-ին կից նախատեսվում է ստեղծել պարզեվատրման Փոնդ 60 միլիոն ո. սահմաններում: Այս Փոնդի մեկ հինգերորդ մասը հատկացվելու յ պարզեվատրելու թեթև արդյունաբերության այն ձեռնարկությունները, վորոնք հաջողությամբ կկատարեն և կգերակատարեն արդՖինպլանները, հատկապես վորակական ցուցանիշների և ինքնարժեքի իջեցման ուղությամբ:

Հարկավոր է նույնպես նշել մի ամբողջ շարք կոնկրետ միջոցառումներ աշխատանքի պաշտպանության բնագավառում, ապահովելով աշխպաշտպանության ձեռնարկումների կիրառումը առաջին հերթին արդյունաբերական ճյուղերում:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒ ՍՈՈՂՁՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈՑՍՍԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՇԽՈՂԿՈՄԱՏԻ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՍՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԽՆԴԻՐՆ Ե

Մենք տեսնում ենք, վոր աշխատանքի պաշտպանության համար բաց թողնված միջոցները շատ հաճախ չեն ծախսվում: Այսպես, Լիսվենսկի գործարանը աշխպաշտպանության համար բաց թողնված 215.000 ուրլուց ծախսել է միայն 142.000 ո., Կոլչուգուենսկի գործարանը՝ 292 հազար ուրլուց 163 հազար ո., Մակեյե-

վրտի Գործարանը՝ 750 հաղար ուրլուց 250 հաղար ու,
«Մարիա» հանրամ, վորտեղ աղետները, ինչպես հան-
քագործներն են ասում, «սովորութիւն են դառել», ե-
լեքտրալարերը հողով ծածկելու համար հատկացված
եր 1440 ու., բայց ծախսված ե միայն 4 ու. 75 կոպեկ,
չնայած աղետները զգալի չափով տեղի յեն ունենում
հենց այն պատճառով, վոր ելեքտրալարերը հողով ծած-
կված չեն:

Վերցնենք մի որինակ ևս Ստալինոյի Գործարանից:
Այստեղ Գործարանի առաջ յերկաթուղային դժեր շատ
կան: Գործարանը դալու համար բանվորը պետք ե անց-
կենա նրանց վրայով: Տնտեսական մարմինները հարց
բարձրացրին այդ դժերի վրա կամուրջ դրելու, իսկ
Գործարկումի աշխատակիցներն ասում են, թե այդ գոր-
ծի վրա աշխատանքային Փոնդից միջոցներ ծախ-
սել չի կարելի, վորովհետեւ կամուրջը հիմնական
ծախս ե:

Ասացե՛ք խնդրեմ, ինչի՞ նման ե այս: Աշխատա-
պանութիւն գումարները լրիվ չեն ծախսել և կամուրջի
վրա ել ծախսել չեն կամենում: Մինչ այդ՝ բանվորնե-
րը շատ հաճախ աշխատանքից ուղանում են, դնացքի
տակ ընկնելու վտանգի տակ են, դեպքեր են լի-
նում, վոր ընկնում են ել: Յես կարող եյի ինչպես
տնտեսական մարմինների և Աշխտողկոմատի մարմին-
ների, այնպես ել Գործարանային կոմիտեների կողմից
աշխատանքային նկատմամբ նման խայտառակ վե-
րաբերմունքի մի ամբողջ շարք դեպքեր բերել: Նրան-
ցից շատերը դեռ մինչեւ ուրս ել չեն կարողանում հաս-
կանալ, վոր բանվորների աշխատանքի ու առողջութիւն
պաշտպանութիւնը իրենց ամենակարեւոր պարտա-
կա-

նութիւնն ե: Մենք նման դրութիւն աչելիս հանդու-
ժել չենք կարող: Մենք պետք ե պատասխանատուութիւն
յենթարկենք տնտեսական ու արհեստակցական այն
մարմիններին, վորոնք վոչինչ չեն անում ոգտագործե-
լու համար աշխատանքայինութիւն գործին հատկացված
բոլոր գումարները:

1931 թ. աշխատանքայինութիւն գործի վրա ծրա-
գրված ե շատ խոշոր գումարներ ծախսել: Այդ գումար
ների ռացիոնալ ոգտագործումն ապահովելու համար
հարկավոր ե արմատապես փոխել տնտեսական, արհես-
տակցական և Աշխտողկոմատի վերաբերմունքը աշխ-
տանքայինութիւն հարցերի նկատմամբ: Պետք ե գոր-
ծի լծել բանվորական հասարակայնութիւնը, բանվոր-
ները հասարակական հրահանգիչներ նշանակել Աշխ-
տողկոմատի հրահանգիչներին ոգնելու համար, նրանց
վորոչակի իրավունքներ ընձեռնելով և աշխատանքա-
նութիւն գործի որինակելի կազմակերպման համար
պարգեւատրելով: Այդպիսով մենք կկարողանանք լի-
վին իրագործել այն բոլոր ձեռնարկումները, վորոնք
նախատեսված են այդ ասպարիզում 1931 տարվա հա-
մար:

ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՄԻՈՒՅՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՂ ԴԵՐԸ ՁԵՌՆԱՐԿՈՒՅՅԻՆՆԵՐԻ ՎՈՂՁ ԿՈՒՆՏԱԾ- ԽԱՏԱՆՔՈՒՄ

Յես կանցնեմ ուսումնական- արտադրական քաղ-
կրթական աշխատանքին: Պրոֆիտութեանական վողջ աշ-
խատանքի հետագա վերակազմութիւն վերաբերայալ
ձեռնարկումները բնականաբար վերաբերում են նաև
այնպիսի կարեւորագույն մի բնագավառի, ինչպիսին ե

միությունները կուլտաշխատանքը: Մենք պետք է ուժեղացնենք պրոֆմիությունների ղեկավարող դերը ձեռնարկությունների վողջ կուլտաշխատանքում: Ներկայումս մի ամբողջ շարք գործարաններում կուլտաշխատողներ գոյություն ունեն: Այս կուլտխորհուրդները պետք է դառնան գործարկումի ուսերատիվ մարմիններ, վորոնց պարտականության մեջ պետք է մտնի ձեռնարկության վողջ ուսումնական-արտադրական և քաղկրթական աշխատանքի ղեկավարությունը: Կուլտխորհուրդները պետք է կուլտաշխատանքի միասնական ծրագիր ունենան և կենտրոնացնեն տնտեսական մարմիններին, կոպերացիայի և հասարակական ու պետական մարմինների միջոցները: Կուլտխորհուրդների աշխատանքն արդեն ծավալվում է Լենինգրադի, Մոսկվայի, Ուլերախնայի և մի ամբողջ շարք այլ շրջանի ամենախոշոր ձեռնարկություններում: Հարկավոր է համակարգել ու զուգորդել զանազան գերատեսչությունների և հասարակական կազմակերպությունների աշխատանքի շահերը, բանվորների կուլտկրթական լավագույն սպասարկման համար կենտրոնացնելով բոլոր ուժերը: Այդ առավել ևս անհրաժեշտ է նրա համար, վոր մեր ձեռնարկություններն են լեցվում հարյուր հազարներով նոր բանվորներ, վորոնց մենք պետք է թրծենք պրոլետարական կաթսայում, բարձրացնենք նրանց քաղաքական ու դասակարգային գիտակցությունը, վորպեսզի նրանք դառնան սոցիալիզմի իսկական կառուցողներ, նրա հաղթանակի համար մարտնչողներ: Կուլտխորհուրդի աշխատանքը պետք է լինի այն, վոր նա ուսումնարտադրական և քաղկրթական աշխատանքներով ըստ ամենայնի լրիվ ընդգրկի ձեռնարկության բոլոր

բանվորներին և բանուժի մասսայական պատրաստման գործը կազմակերպի, հատուկ ուշադրություն դարձնելով նորեկ բանվորներին վրա: Կուլտաշխատանքը վերացական չպետք է լինի, այլ պետք է շողկապի սոցիալիստական շինարարության կոնկրետ խնդիրներին, նոր կադրեր պատրաստելու և տվյալ ձեռնարկության բանվորների վորակավորումը բարձրացնելու հարցի լուծմանը:

Մենք պետք է կուլտխորհուրդի վրա դնենք նաև բանվորների յերեխաների սպասարկման աշխատանքը, այդպիսին կապելով մանկական մսուրների, մանկապարտեզների և այլ ձեռնարկումների կազմակերպմանը:

1931 թ. մոտ 800,000 կանայք են մտնելու մեր արդյունաբերության մեջ: Մենք պետք է նրանց համար աշխատանքի նորմալ պայմաններ ստեղծենք, նրանց յերեխաներին մանկապարտեզն. և մսուրներում տեղավորելով: Յեթե մինչև այժմ մանկապարտեզների կազմակերպումը պրոֆմիությունների անմիջական գործը չի յեղել, ապա այժմ այդ աշխատանքը մենք մեր ուսերի վրա պետք է վերցնենք: Դատարկ հնչյուններ կմնան մեր խոսակցությունները այն մասին, վոր ձեռնարկությունում տղամարդն և կինը հավասար են, յեթե մենք ձեռք հետ միասին չստեղծենք այնպիսի համապատասխան պայմաններ, վորոնցում բանվորուհին, իր յերեխաներին մըսուրն ու մանկապարտեզը տալով, կարողանա աշխատել ձեռնարկությունում, առանց անհանգստանալու յերեխաների դրության մասին:

Այժմ հարկավոր է նույնպես ուժեղացնել միության տնդամների առավելության իրավունքը զանազան դաս-

ընթացքներում, իրիկնային բանֆակններում և համալսարանում ընդունվելիս: Առաջելու իրավունք մենք պետք է սահմանենք նաև պրոֆմիուսթյան անդամների զավակների նկատմամբ գործադրոցները, մասսայական պրոֆեսիաների դպրոցները, մանկապարտեզները, մանկահարսպարակները և այլ ուսհիմնարկները մտնելիս: Այս բնագավառը նույնպես մեր ուշադրության կենտրոնը պետք է կազմի:

ԿԱՆՈՆԱՎՈՐԵԼ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՐՏԱԳՈՐԾՈՒՍԸ

Պրոֆմիուսթյունների փոքրացումը պրոֆմիուսթենական միջոցներն ել ավելի կենտրոնացնելու անհրաժեշտություն հարցն է առաջադրում: Միացնելով բոլոր միուսթյունների ձեռնարկումները կադրերի պատրաստման, լիկկայանների, պարտադիր ուսուցման, մերձ քաղաքային տնտեսությունների և այլ բնագավառներում, պրոֆմիուսթյունները պետք է միաժամանակ արժատական վերակառուցման յենթարկեն նաև իրենց ֆինանսական աշխատանքի վողջ քաղաքականությունն ու պրակտիկան: Յեղնելով այն բանից, վոր մեզ մոտ գոյություն ունի միասնական ժողտնտեսական պլան, վորն իր մեջ է պարփակում նաև պրոֆմիուսթենական միջոցներ, մենք պրոֆմիուսթյուններս պետք է ունենանք մեր միասնական պլանը: Բայց այդ ասե՞լ է արդյոք, վոր միասնական պրոֆբյուջե ստեղծելով միասնական դրամարկը ենք ստեղծում: Վո՞չ, մենք ամենավճռական կերպով բաժանվում ենք այն ընկերներից, վորոնք կարծում են թե միասնական պրոֆբյուջե ստեղծելով մենք միասնական

դրամարկը ենք ստեղծում: Դրամարկդները պետք է կազմակերպվեն կենտրոնական կոմիտեներին դժով:

Մենք պետք է մեր ֆինանսների արժատական օգործը կատարենք, փոխենք դեռևս վերականգման շրջանում դոյացած ֆինանսական կարգերը, վորոնք այսօր միայն խանդարում են մեր աշխատանքներին: Միջմիուսթենական կադմակերպությունները պետք է ընդգրկել ՀԱՄԿԽ-ի նախահաշվային ֆինանսավորման մեջ: Պրոֆմիուսթենական մարմինների վոչ մի հատկացում տեղերում չպետք է լինի, իսկ ՀԱՄԿԽ-ը, կենտրոնական կոմիտեներից հատկացումներն ստանալով, պետք է ըստ նախահաշիվների սուբսիդիա տա միջմիուսթենական մարմիններին: Դրա հետ միասին, պետք է կենտրոնացնել նաև կենտրոնական կոմիտեների դրամարկդներն աշխատանքի բաժինները թողնելով նախահաշվաբլ միուսթյունների բաժինները թողնելով նախահաշվային սահմանման կարգով և ամբողջ մնացորդը կենտրոնական կոմիտեներին հատկացնելով: Ի՞նչ կլինի այս ամենի արդասիքը: Յես այստեղ մանրամասն չեմ դարդացնի այս հարցը, մեր որակարդում նա կա և նրա մասին ավելի մանրամասն կզեկուցի ընկ. Պոպովը: Յես միայն կմտոնանչեմ այն, վոր այդ սիստեմը հնարավորություն կտա առավելագույն պարզաբանություն մեջ և նրանց միջոցները լավագույն ձևով ուղտագործել պրոֆմիուսթյունների աշխատանքների ծավալման համար անհրաժեշտ կարիքների վրա: Այս պայմաններում կենտրոնական կոմիտեները կլիտենան, թե ինչպիսի միջոցներ ունեն իրենց արամադրության տակ, չեն թույլ տա ուժեղացում կատարել, թանդ կդնահատեն և կպահպանեն բանվորական կոպեկները, վորոնք վորպես անդամավճար մուծվում են պրոֆմիուսթյունները: Այստեղ ա-

սում են, թե ՀԱՄԿՈ՛ւր պրոֆմիուսթյուններին որապահելի յե կապում: Վոչ թե որապահելի, ընկ. Սիմազին, այլ նախահաշիվ: Ֆինանսավորման այսպիսի կարգը խոշոր քայլ է դեպի առաջ, վորովհետեւ նա մեզ հնարավորութիւն կտա ավելի վորոշակի կատարել մեր աշխատանքը և ավելի լավ ոգտադործել պրոֆմիուսթյունների միջոցները (մի ձայն տեղից— «Այդ անվստահութիւնն է միութիւնների հանդեպ»): Վստահութիւնն աւելով, դուք հասկանում եք այսպես, — վոր միութիւնների կենտրոնական կոմիտեն ձեզ չի կանչում և հսկողութիւն չի սահմանում ձեր վրա: Այդպիսի «վստահութիւնը» մենք համարում ենք ամենամեծ մի թափթըրիվածութիւն, վորպիսին անհանդուրժելի յե մեր սրբերի համար:

Միջմիութենական մարմինները նախահաշիվային կարգի փոխանցելով, մենք մեր վստահութիւնն ենք արտահայտում միութիւնների կենտրոնական կոմիտեների հանդեպ, վորոնք պետք է քննեն մարդային բաժինների նախահաշիվները, ինչպես նաև մարդային բաժինների հանդեպ, վորոնց վրա յե ընկնում գործարանային նախահաշիվները քննելու պարտականութիւնը և այլն: Այն ժամանակ, մենք չենք ունենա ֆինանսավորման գործի այն խայտառակ դրութիւնը, վորպիսին մենք ունեցանք ընթացիկ տարում, յերբ վոչ մի միութիւն ճիշտ չգիտեր, թե ինչպիսի միջոցներ ունի իր տրամարութիւն տակ:

Պրոֆմիութիւնների աշխատանքը խիստ փոխվել է, և համապատասխան կերպով պետք է փոխվի նաև մեր ֆինանսական քաղաքականութիւնը: Առանց սպասելու պրոֆմիութենական համագումարին, մենք պետք

է վերահառուցվենք, վորպեսզի կարողանանք նոր ձեւերով և հարկ յեղածին պես տանել այս պատասխանատու գործը:

ԲԱՆՎՈՐ ԳՐՈՂՆԵՐԻ ԿԱԴՐԵՐ ՍՏԵՂԾԵԼ

Մենք պետք եմերահառուցենք մեր մամուլն արդու նաբերութիւն հիմնական ճյուղերի և բանվորական խրմբերի առավելագույն սպասարկման տեսանկյան տակ: Հարկավոր է, վոր մենք բանթղթակիցների լայն ակտիվին կազմակերպենք պրոֆմիութենական մամուլի շուրջը: Անհանդուրժելի յե այնպիսի դրութիւն, յերբ պրոֆմիութենական մամուլում դեռևս մի գլուխ մենայնորհայլ տեղ են դրավում մասնագետ-գրողները, կամ, ինչպես շատ ճիշտ են նրանց կոչում այստեղ «գրչակները»: Մեր պրոֆմիութենական մամուլը պետք է արտահայտի այն ամենը, ինչ կատարվում է գործարաններում, պրոֆմիութիւններում: Նա ժամանակին պետք է աղղանշան տա բոլոր անհարթութիւնների մասին: Այդպիսի դրութիւն կարելի յե հասնել միայն այն պայմանով, յեթե գզալիորեն ընդլայնվի բանթղթակիցների կամավոր ակտիվը մեր ձեռնարկութիւններում: Բանթղթակիցները մեր թերթերի հիմնական գրողները պետք է լինեն, ըստ վորում վոչ թե սոսկ բանթղթակիցներ են մեզ հարկավոր, այլ մեզ հարկավոր է բանթղթակցային ակտիվը, վորը կարողանա թերթը կապել մասսաներին և նրան հնարավորութիւն տա ժամանակին դնել հարցները պրոֆշարժման առաջ, ժամանակին ցույց տալ լավն ու վատը, վորպեսզի ճիշտ ընթանա պրոֆմիութիւնների աշխատանքը: Հենց այդպես է, վոր պետք է դնել մեր մամուլի վերահաղմակերպման հարցը:

Մեր բոլոր թերթերն ու հրատարակութիւնները բան վրբ հարվածայիններով ամբողջապէս հարցը պետք է լուծվի ամենամոտիկ ժամանակամիջոցում :

Յեւ կկամենայի այստեղ նշել ՀԱՄԿԻՍ-ի հրատարակչութեան աշխատանքը բանվոր գործընկեր աշխատանքին զարկ տալու գործում : Մենք ունենք արդէն բանվոր գործընկերի վորոշ կադրեր, վորոնք աշխատում են ձեռնարկութիւններում ,և վորոնք իրենց զբաղւում դրսեւորում են այն պայքարի փորձը, վորպիսին մղում են բանվորները սոցիալիստական շինարարութեան հաջող ծափարման համար : Այս փորձը, ինչպես այդ զույգ ե տալիս մեր հրատարակչութեան միջոցով լուսընծայված գրականութիւնը, շատ հաջող ե դուրս յեկել : Եւ մեզ հնարավորութիւնն ե տալիս գործընկերի բոլորովին նոր կադրեր պատրաստել, ըստ վորում այնպիսի գրողներին, վորոնք հասկանալի յեն բանվորական լայն մաստաներին : Այս գրականութիւնն եժան ե, հասկանալի ու մատչելի : Հարկավոր ե այս գործը, բանվորական գրականութեան այս գործը, գրականութիւնն, վոր ընդհանրացնում ե մեր պրոֆմիութիւններին աշխատանքը, և կարգրում աշխատանքը ձեռնարկութիւններում, — ամեն կերպ խրախուսել ու ծափալել :

**ՈՒԺԵՂԱՑՅԵԼ ՅԻՏԻ ԴԵՐԸ ՎՈՐՊԵՍ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԿԱԶՄԱԱԵՐՊՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ-ՇԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ**

Մենք ունենք աշխատանքի կենտրոնական ինստիտուտ (ՅԻՏ), վորը գիտական-հետազոտական ինստիտուտ ե : ՅԻՏ-ը խոշոր աշխատանք ե կատարում բանուժի պատրաստման ու վերավորակավորման ուղղութեամբ : ՅԻՏ-ի աշխատանքի շնորհիվ մեծահասակ բան-

վորների զգալի մի մասը կարողացել ե վորակավորումը բարձրացնել : ՅԻՏ-ը մեծ աշխատանք ե կատարել «լակունա» գործարանում : Այդ գործարանում մի ամիս աշխատելուց հետո հաջողվեց փոփոխութիւններ և մի շարք բարելավումներ մտցնել արտաւրութեան սրբոցներին մեջ, վորին հետեանքով զգալիորեն բարձրացավ բանվորների աշխատանքի արտադրողականութիւնը :

Արտադրութեան ռացիոնալացման խնդրում ՅԻՏ-ի միջոցով կատարված աշխատանքներին շարքը պետք ե դասել նաև աշխատանքային ուղեբացիաների ստորաբաժանումը : Այս փորձը կիրառվում ե Ստալինգրադի տրակտորի գործարանում և լավ արդյունքներ ե տալիս : Այդ արդէն իսկ գիտական-տեխնիկական նորմալ վորման սկիզբն ե համարվում : Այս աշխատանքը, վորն արդէն ստուգված ե պրակտիկայում ՅԻՏ-ի լաբորատորիայի միջոցով, պետք ե բանվորական մասսաներին սեփականութիւնը դարձնել :

Աշխատանքի ճիշտ կազմակերպման մեթոդները պետք ե փոխադրել մյուս ձեռնարկութիւնները : Իրեն արդարացնող այս փորձը ՅԻՏ-ի սահմաններից դուրս բերելով միայն մենք կուժեղացնենք նրա դերը, վորպէս աշխատանքի կազմակերպման գիտական-հետազոտական ինստիտուտի : Այս ասպարիղում թե՛ ՅԻՏ-ը և թե՛ ՀԱՄԿԻՍ-ը առայժմ քիչ բան են արել :

ՅԻՏ-ի աշխատանքը մի ամբողջ շարք պատասխաններ ե տալիս մեր ձեռնարկութիւններին ճիշտ ռացիոնալ աշխատանքի հարցերին : Ուստի յես պետք ե ասեմ, վոր ՅԻՏ-ը, վորպէս գիտական-հետազոտական ինստիտուտ, պետք ե լինի ՀԱՄԿԻՍ-ի լաբորատորիան, և մենք պետք ե կարողանանք լավ ոգտագործել այդ լաբորատորիան :



Մի քանի խուճ պրոֆչարթման բարձրագույն գրպրոցի և նրան կից ասպիրանտուրայի մասին և շիմ մենք 700-ից ավելի սովորողներ ռեննք պրոֆչարթման բարձրագույն դպրոցում: Մենք մտադիր ենք մոտիկ ժամանակում այդ թիվը հասցնել 1500-ի: Պրոֆչարթման բարձրագույն դպրոցին կից մենք ստեղծել ենք ասպիրանտուրա, վստը լանսիոններից պրոֆչարթման գիտական աշխատավորների կազմերի պատրաստման դործի սկիզբն է հանդիսանում: Ինչպես ամբողջ պրոֆչարթման դպրոցի, այնպես և այս ասպիրանտուրայի աշխատանքը պետք է շողկապվի ՀԱՄԿԽ-ի և միությունների կենտրոնական կոմիտեների ու պերատիվ աշխատանքին: Հարկավոր է, վոր բարձրագույն դպրոցի ուսումնական կյանքը շողկապվի անմիջապես պրոֆ աշխատանքների հետ: Դպրոցը կոնկրետ առաջարկություններ պետք է ստանա ՀԱՄԿԽ-ից և այդ առաջարկությունները կատարի, այս կողմից ևս ուսուցումը և պրակտիկան իրար շողկապելով:

ՓՈՐՁԻ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄԸ ՊՐՈՖԱՇԻԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼ ՏԵՂՆ Ե

Յես պետք է շոչափեմ մեր վողջ աշխատանքի ամենախոշոր թերություններից մեկը: Մենք վատ ենք ընդհանրացնում պրոֆմիությունների դործնական աշխատանքի փորձը: Յես կարծում եմ, վոր չեմ սխալվի, յեթե ասեմ, վոր փորձի վերլուծությունն ու ընդհանրացումը պրոֆաշխատանքի ամենից ավելի թույլ տեղերն են հանդիսանում:

Առանց այս կարեվորագույն բնագավառն ուժեղացնելու, անկարելի յե բարելավել պրոֆմիությունների

վողջ ու պերատիվ աշխատանքի ղեկավարությունը, լավացնել ժողանտեսական պլանի մշակման գործում պրոֆմիությունների կոնկրետ մասնակցության վորակը: Առանց ուժեղացնելու մեր աշխատանքը փորձի վերլուծության և ընդհանրացման ասպարիզում, անհնարին է բարձրացնել պրոֆմիությունների հետագա աշխատանքը

Ի՞նչ պետք է անել:

Պետք է ուժեղացնել պրոֆակտիվի մասնակցությունը տեսական աշխատանքի մեջ: Մենք ստեղծում ենք խորհրդային պրոֆչարթման համար հասուկ ղեկավարող տեսական որդան: Այդպիսի մի ժուրնալ խոշոր դեր կխաղա կուսակցության դիսուվոր գծի համար պրոֆմիությունների կողմից մղվող պայքարի փորձն ընդհանրացնելու գործում:

ՀԱՄԿԽ-ից, միությունների կենտրոնական կոմիտեներից և միջմիութենական կազմակերպություններից սկսած պետք է ամրացնել պրոֆմիությունները դիտական պատրաստականության տեր աշխատավորների համապատասխան վորակյալ կազմերով, վերցնելով այդպիսին յերիտասարդներից, մասնավորապես 100 հողի վերցնելով բարձրագույն ուսումնական հիմնարկների նորավարաններից:

Անհրաժեշտ է նույնպես կոմունիստական լուսավորության ինստիտուտում արհեստակցական և աշխատանքային հարցերի բաժանմունքներ բաց անել և ուսանողներին ոգտադործել պրոֆմիությունների գործնական աշխատանքներում:



Ընկերներ, այն առաջարկությունները, վորը նշել է կուսակցությունը հնգամյակի յերբորդ, վճռա-

կան տարվա պլանում, պայմանավորում են խոշոր տեղաշարժեր այն պայքարում, վորը միշտ է պրոլետարիատը սոցիալիզմի կառուցման համար: 1931 թ. մեր խնդիրների չափը ամենից ավելի լավ կարող է արտահայտվել նրանով, վոր այդ տարում, արդյունաբերության հետագա զարգացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման ամրապնդման ու ծավալման հիման վրա մենք սոցիալիստական տարրերի բացարձակ գերակշռություն կունենանք կապիտալիստական տարրերի նկատմամբ վոչ միայն արդյունաբերության մեջ, վորտեղ «ով ում» հարցը արդեն անվերադարձ կերպով լուծված է ի նպաստ սոցիալիզմի, այլև գյուղատնտեսության մեջ: Սոցիալիստական արդյունաբերության զարգացման բարձր տեմպերի հիման վրա, համատարած կոլեկտիվացման և այդ հիմունքով կապիտալիստական վերջին դասակարգի-կուլակության-վերացման հիման վրա, մենք 1931 թ. կավարանք ԽՍՀՄ-ի սոցիալիստական եկոնոմիկայի պատվանդանի կառուցումը:

Պրոֆմիությունները կուսակցության ղեկավարությունում, մեկուսացնելով բացահայտ ուղորտունիստական տարրերին, արդեն զգալի աշխատանք ենք կատարել «յերեսներս դեպի արդյունաբերություն» լոզունգի իրականացման ուղղությամբ: Պրոֆմիությունները մոտեցել են բանվոր դասակարգի արտադրական ակտիվությանը-սոցմրցման ու հարվածայնությանը ղեկավարելու գործին: Այժմ մեր առաջ խնդիր է գրված շարունակել մեր աշխատանքը՝ խորացնելու համար պրոֆմիությունների շրջադարձը դեպի արտադրությունը: Մենք հիմա այլևս չենք կարող բավականանալ արդյունաբերության սոսկ ընդհանուր խնդիրներով:

Մենք չենք կարող վերացականորեն խոսել «յերեսներս դեպի արդյունաբերություն» լոզունգի մասին: Իրականացնել այդ լոզունգը նշանակում է ուժեղացնել պրոֆմիությունների կոնկրետ ղեկավարությունը ձեռնակությունների արտադրական կյանքի ու բանվորական առանձին խմբերի նկատմամբ և ամենուրյա ոժանդակություն ցույց տալ նրանց արտադրական պլանների կատարման ու գերակատարման գործում (աշխատանքի առանձին բնագավառների ռացիոնալացում, պայքար վորակի համար և այլն):

Բանվոր դասակարգի նյութական և կուլտուր-կենցաղային դրություն բարելավումը պրոֆմիությունների վողջ արտադրական աշխատանքի բաղկացուցիչ և անբաժան մասը պետք է հանդիսանա: Անասնաբուծական Ֆելմա, բանջարանոց, ճաշարան, լվացքատուն, բաշնիք, գործարանային կոոպերպակ—այս ամենը պրոֆմիությունները բոլոր ողակների ամենուրյա հոգածության առարկա պետք է դառնա:

Իմ ղեկուցման մեջ շոշափած այս բոլոր ձեռնարկումների քաղաքական խոշոր իմաստն այն է, վոր պրոֆմիությունները կմոտենան արտադրության կոնկրետ պայմաններին, ավելի լիովին ու ավելի խորապես կընդգրկեն վողջ բանվոր դասակարգին:

Այս բոլոր ձեռնարկումները անհրաժեշտ նախադրյալներ ու պայմաններ կստեղծեն ավելի մեծ չափերով ներգրավելու բանվորական միլիոնավոր մասնակրին սոցիալիստական շինարարության կոնկրետ հարցերի շուրջը, հնարավորություն կտան պրոֆմիություններին ուժեղացնելու իրենց դերը պրոլետարիատի կոմունիստական դաստիարակման գործում, վոր-

սլիսին առանձնապէս պետք է ընդգծել նոր ներդրավիող բանվորներին նկատմամբ:
